

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ РА
MINISTRY OF CULTURE OF RA

ԿՄՐՈՑ
ԳՆԻՊ

NATIONAL ACADEMY OF SCIENCES THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

ARMENIAN
TRADITIONAL MUSIC
SERIES

Issue XII

СЕРИЯ
АРМЯНСКАЯ
ТРАДИЦИОННАЯ МУЗЫКА

Выпуск XII

AMՉՕՏ
G R O U P
YEREVAN, 2014

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

Պրակ XII



ԵՐԵՎԱՆ, 2014

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ТРАДИЦИОННЫЕ ПЕСНИ И НАИГРЫШИ

ВАЙОЦ ДЗОРА

ЧАСТЬ II

ОБРЯДОВЫЙ ЦИКЛ

СОСТАВИТЕЛИ — ЗАВЕН ТАГАКЧЯН, РИПСИМЭ ПИКИЧЯН

РЕДАКТОРЫ ВЫПУСКА
З. ТАГАКЧЯН, Р. ПИКИЧЯН

TRADITIONAL SONGS AND TUNES OF

VAYOTS DZOR

PART II

RITUALS

COMPILED BY ZAVEN TAGAKCHYAN, HRIPSIME PIKICHIAN

ISSUE EDITORS BY
Z. TAKAGCHYAN, H. PIKICHIAN



ՎԱՅՈՑ ՉՈՐԻ
Ա Վ Ա Ն Գ Ա Կ Ա Ն
ԵՐԳԵՐ ԵՎ ՆՎԱԳՆԵՐ

II
ՄԱՍ
ԾԻՍԱԿԱՆ ՇԱՐՔ

ԿԱԶՄԵՑԻՆ
ՁԱՎԵՆ ԹԱԳԱԿՉՅԱՆԸ, ՀՈՒՓՄԻՄԵ ՊԻԿԻՉՅԱՆԸ

ՊՐԱԿԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝
Ձ. ԹԱԳԱԿՉՅԱՆ, Հ. ՊԻԿԻՉՅԱՆ

ՀՏԴ 781.7
ԳՄԴ 85.31
Վ 216

**ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ
ИЗДАНО ПО ГОСУДАРСТВЕННОМУ ЗАКАЗУ
STATE ORDER PUBLICATION**

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

**Ձ. ԹԱԳԱԿՉՅԱՆ, Կ. ԽՈՒԴԱԲԱՇԻՅԱՆ (գլխավոր խմբագիր),
Ժ. ՄԵՀՐԱԲՅԱՆ, Ա. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ,
Հ. ՊԻԿԻՉՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ)**

**ПЕЧАТАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА
ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА**

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ СЕРИИ:

**Յ. ԹԱԳԱԿՉԻԱՆ, Կ. ԽՈՒԴԱԲԱՇԻՅԱՆ (главный редактор),
Ջ. ՄԵԳՐԱԲԻԱՆ, Ա. ԲԱԳԴԱՍԱՐԻԱՆ,
Ր. ՊԻԿԻՉԻԱՆ (зам. главного редактора)**

**PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF THE INSTITUTE OF ARTS NAS RA**

SERIES EDITORIAL BOARD:

**Z. TAGAKCHYAN, K. KHUDABASHYAN (editor-in-chief),
ZH. MEHRABYAN, A. BAGHDASARYAN,
H. PIKICHIAN (vice-principal editor)**

Վ 216 Վայոց ձորի ավանդական երգեր և նվագներ: Մ. 2, Պրակ 12/ Կազմ.
Ջավեն Թագակչյան, Հռիփսիմե Պիկիչյան.- Եր.: Ամրոց գրուպ, 2014.-
256 էջ.- ("Հայ ավանդական երաժշտություն" մատենաշար):

ISMN 979-0-69380-063-6

ՀՏԴ 781.7
ԳՄԴ 85.31

© ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2014թ.
© «Ամրոց գրուպ», 2014թ.

ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԱՎԱՆԳԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՈՒ ՆՎԱԳՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի ներկա 12-րդ պրակն ամփոփում է Վայոց Չորի գիտական ու գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող ավանդական ծիսական երգերն ու նվագները: Ժողովածուում տեղ գտած նյութերը գրանցվել են ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի ձայնադարանում ամբարված Ք. Ս. Կուշնարյանի 1928 թ. և Ժողովրդական երաժշտության բաժնի աշխատակիցների հինգ՝ 1957, 1990, 1991, 1997, 1998 թթ. գիտարշավների ընթացքում¹: Նշված 6 գիտարշավներից հավաքածուում ընդգրկվել է ծիսական ավանդական երգերի ու նվագների 145 նմուշ:

Մեր խնդիրն է քննության առնել հավաքածուում ընդգրկված նմուշներն իրենց եղանակավորման, կառուցվածքային յուրահատկությունների, տիպական դրսևորումների մեջ: Ուսումնասիրությունը կատարվել է ըստ ծիսական երաժշտության ժանրերի և դրանց ենթատեսակների: Հավաքված նյութը հնարավորություն է տվել ժողովածուն դասդասել ըստ տարեշրջանի օրացուցային տոների, անձրևաբերության, ուխտագնացության, հարսանեկան և հուղարկավորության ծեսերի ընթացքում կատարվող ժողովրդական հոգևոր և աշխարհիկ բովանդակության երգերի ու նվագների: Նկատի ունենալով սովորաբանակ հարսանեկան երգերի (36 նմուշ) և նվագարանային երաժշտության (64 նմուշ) մեղեդիների կառուցվածքային էական տարբերությունները, հարմար ենք նկատել դրանք ներկայացնել միմյանցից զատ: Ուսումնասիրությունները կատարելիս մեզ մեծապես օգնել են Կոմիտասի, Ք. Կուշնարյանի, Կ. Խուդաբաշյանի, Հ. Պիկիչյանի հայ ավանդական երաժշտարվեստին նվիրված աշխատությունները:

ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՍՈՒՐԲ ԾՆՆԳՅԱՆ ՏՈՆ: Սուրբ Ծննդյան տոնի բազմաբնույթ երգերից ժողովածուում ընդգրկում է մանկանց խմբերի տնետուն այցելությունների ընթացքում հնչող ժողովրդական *Ավերիսների* երեք նմուշ: Բոլոր երեք օրինակները խաղարկային բովանդակություն և կառուցվածք ունեն: Մրանք ծիսական այն երգերից են, որի ընթացքում մասնակիցների խմբերը, փոխփոխ երգեցողությամբ, ծեսին բնորոշ թատերայնացված գործողություններ են ներկայացնում: Որպես կանոն դրանք բազմամաս են: Մասերի քանակը բխում է բովանդակությունից:

Թ. 1-ը շարադրված է *Էոլական կվինդային հիմնառանցքով չայնակարգում* (Է5 ձ/կ-ում)², 6/8

¹ Վայոց Չորի մարզում 1957 թ. գիտարշավն իրականացրել է երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Մաքսու Մուրադյանը, 1990 թ. գիտարշավը ղեկավարել է արվեստագիտության թեկնածու Կարինե Խուդաբաշյանը, մասնակիցներ՝ Հռիփսիմե Պիկիչյան, Լիլիթ Երնջակյան, իսկ 1991, 1997 և 1998 թթ. գիտարշավները ղեկավարել է պատմ. գիտ. թեկնածու՝ Հռիփսիմե Պիկիչյանը, մասնակիցներ՝ Չավեն Թագակչյան, Արուսյակ Պետրոսյան, Եվա Գիլանյան:

² Այսուհետ ձայնակարգերի անվանումները ներկայացվում են հապավումներով. Էոլականը՝ **Է**, դորիականը՝ **Չ**, փոյուգիականը՝ **Փ**, իոնականը՝ **Ի**, լոկրիականը՝ **Լ**, հարմոնիկը՝ **Հ** (մեծատառերով), իսկ նրանց հիմնառանցքները՝ թվերով: Օրինակ՝ **Է5 չ/կ-ում** հապավումը պետք է կարդալ՝ Էոլաան կվինտային հիմնառանցքով ձայնակարգում:

չափակարգում: Գերակայում են *մեծավերջ* կամ *մեծասար*³ ռիթմական պատկերներն ու դրանց ամենատարբեր՝ *քորիյանք* համակցումները, որի շնորհիվ՝ երգիծական շունչ ու պարային կերտվածքներին հատուկ կենսուրախ տրամադրություն են հաղորդվում: Ծննդյան ավետիսներից թ.2-ն ու 3-ը բովանդակությամբ մոտ են նախորդին: Թ.3-ն ունի՝ քառամաս կառուցվածք: Մասերը համեմված են նախընթեր և վերջընթեր «Ալելույա...» կրկնակային տողերով: Խոսքային բաղադրիչներից առաջինը, որը նախորդ նմուշներում բացակայում է, ներկայացնում է ծննդյան ավետիսների խորհուրդը: 2-րդ մասում կրկնվում է նախորդ նմուշներում առկա խոսքային կառույցի հարց ու պատասխանը, 3-րդ և 4-րդ մասերում շարադրվում է մանկան գովքը, որին հավելվել են նվեր/գոհաբերություն ակնկալող խոսքեր: Շարադրված է նմուշը **Է3** ձ/կ-ում, խոսքային կերտվածքով 4:4 համամասն բաժանմամբ 8-ավանկ կառուցվածքի է:

ՑՅԱՌՆԸՆԳԱՌԱՋԻ ՏՈՆ: Մեր օրերում էլ Տյառնընդառաջի ծիսակարգում պահպանվել է ձմեռվա խստաշունչ օրերի դիմացն առնելու՝ խարույկ-կրակով մայր հողը ջերմացնելու, խարույկի շուրջը պար բռնելու ավանդույթը, որը հաճախ ուղեկցվում է գուռնա-դիոլի նվագակցությամբ՝ վերվերիների կամ թոնոցիների կենսախինդ պարեղանակներով, ինչպես նաև սիրային և այլ բովանդակության պարերգերով: Ցավոք, ի տարբերություն բանաստեղծական տեքստերի՝ եղանակավոր նմուշների գրառումներ հայ ավանդական երգարվեստում սակավ են հանդիպում: Ժողովածուում ներկայացվող «Ախչի յարե...» թ.7 երգի խոսքերը հանպատրաստից հորինվածքներին հատուկ՝ ազատ շարադասություն ունեն: Ըստ խոսքի ու մեղեդու կերտվածքի՝ երգը տրոհվել է հինգ տան: Գերակայում են պարային չափակշռությին բնորոշ բաղադրիչների շարունակական շղթայումները, նպաստում են շուրջպարի անընմեջ ընթացքին: Այս պարագային, երկրորդային նշանակություն են ստանում խոսքային կառույցներում առկա անհամաչափություններից բխող ոչ պարբերական ձևաչափերը:

ԲԱՐԵԿԵՆԳԱՆԻ ՏՈՆ: Մեր հավաքածուում գրանցվել է Բարեկենդանի երգի միայն մեկ նմուշ՝ թ.8 «Ելեք, տեսեք»-ը: Բանահյուսական տեքստը, ինչպես նմուշի այլուր տարածված տարբերակները, կառուցված է հարց ու պատասխանի ձևով: Եղանակը շարադրված է մեծ սեքստա ընդգրկող **Է4** ձ/կ-ում, եռմաս կառույցով: Մասերից յուրաքանչյուրն ամփոփված է մեկ պարբերության մեջ, որոնցից առաջին երկուսը եռատող են, վերջինը՝ 5-ատող: Ինչպես Տյառնընդառաջի երգում,՝ այստեղ ևս գերակա են *քորիյանք* տաղաչափական ոտքերը, որոնք ընդհանուրի շուրջ 70% են և վկայում են մեղեդու պարային կերտվածքի մասին:

ՀԱՄԲԱՐՉՍԱՆ ՏՈՆ: Ծիսական երգերից հավաքածուն ամփոփում է գուշակության խաղիկների՝ «Ջան գյուլումի» ութ նմուշ և մեկ նվագարանային (թ.14) կատարում: Երգային նմուշների շարադասության մեջ կարևորվում են «Ջան գյուլում, ջան, ջան» կրկնակային տողերը: Բացի 4/4-ում գրառված թ.7-ից, մնացած բոլորը շարադրված են 6/8-ում: Երգերի բանահյուսական տեքստերը բաղկացած են կրկնակային տողերով մեկընդմիջվող երկտող կամ քառատող տներից, որոնց հիմնատողերն առավելապես 7, իսկ կրկնակային տողերը՝ 5-ավանկ շարադրանք ունեն: Այսօրինակ հիմնատողերի և կրկնակային տողերի վանկական ակնբախ տարբերության պարագային, տողերը հավասար տևողությամբ երկտակտ են, որոնց ներքին բաժանումը նույապես հավասարաչափ է: Անգամ, երբ վանկերը քանակապես տարբեր են, չի խախտվում մեղեդու համաչափ՝ պարային ընթացքը: Վայոց Ձորի «Ջանգյուլումի» խաղիկներում և թ.14 նվագարանային օրինակում, գերակայում են էոլական ձայնակարգերը: Թ. 6 և 11 օրինակներում հանդիպում ենք ձ/կ-ային անցումների՝

³ Վանկաչափական միությունների (стопы) անվանակարգերը կիրառել ենք Կ. Խոլոպրաշյանի կողմից համակարգված եռալեզու աղյուսակը. **Худавашян К.**, Армянская музыка в аспекте сравнительного музыкознания, Ереван, 2011, стр.180-185.

Ի3-ից փոքր տերցիա ցած **Է4/5**: 9 նմուշից միայն ք.10-ն է, որ շարադրված է **հիպոհ** ձ/կ-ում: Բոլոր 7 օրինակներում տողերի վանկաչափական շարադասությունների առաջնային հատվածներում գերակայում են *մեծավերջ* և *մեծասար*, իսկ վերջավորող՝ կադանասային դարձվածքներում, *ավար-տեղ* և *համբույր* ուղքերը, որոնք պարբերականության հետ մեկտեղ, պարային շեշտադրում ունեն:

ՎԱՐԳԱՎԱՌԻ ՏՈՆ: Թեև Վարդավառի տոնի ծիսական որոշ արարողակարգեր առ այսօր պահպանվել են մեր կենցաղում, սակայն ծիսական երգեր, պարերգեր կամ պարեր սակավ են հանդիպում: Վայոց Ձորում մեր ձայնագրած միակ օրինակը ք.17-ը՝ «*Սոնա յարը*», Կոմիտասի Շիրակում գրի առած նույնանուն երգի տարբերակն է⁴, ու թեև մեր օրինակը շարադրված է նույն՝ **հիպոհ** անհենա-կետ ձ/կ-ում և լադային կառույցով գրեթե չի տարբերվում, չափակշռության (*ռիթմ*) առումով, կոմիտասյան օրինակի համաչափ ութերորդականների փոխարեն, մեր տարբերակում տեղ են գտել կետգծային *քորիյամբ* ռիթմերը, որը մեղեդուն քայլերգերին հատուկ երանգ են հաղորդում:

ԱՆՉՐԵՎԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԾԵՍ: Պտղաբերության ծիսական երգերից մեզ առիթ է ընդձեռնվել գրանցել անձրևաբերության ծեսի երգի երեք նմուշ: Թ.16 և 17-ը ձայնագրվել են մայր և դուստր Հակոբյաններից: Դուստրը՝ Վերգինեն այն ներկայացրել է «Նուրի-Նուրին» անձրևի հովանավոր ոգու ընդհանրական անվանումով և երգել է զարդահնչյուններից գրեթե գերծ, պարզեցված՝ դեկլամացիոն բնույթի *բանաշխային* եղանակավորմամբ: Մինչդեռ մայրը՝ 70-նն անց Օսանը, մտաբերել է անձրևի հովանավոր ոգու տեղային անվանումը: Նրա երգած «Կողի-Կողին»-ում դատեր ներկայացրած *բանաշխին* գումարվել են գեղերգված ինտոնացիաներ, որոնք առավել երգային են դարձրել շարադասությունը: Երկու տարբերակներում էլ բանաստեղծական կառույցը 7-ավանկ տողեր են, որտեղ 7 և 8 տողերում կրկնվող բառերն ու բառակապակցությունները կառույցները դարձնում են 10-նավանկ, որոնք ունեն վիպական երգերին բնորոշ վանկաչափական կերտվածք: Կառուցվածքով սրանք անձրևաբերության երգերին բնորոշ տիպական օրինակներ են: Նմուշները ձայնակարգային կառույցներով տարբեր են: Թ.15-ի 6-ատող շարադրանքն ամբողջությամբ **Է3** ձ/կ-ում է, իսկ 4-ատողը՝ նույն հիմնաձայնով **Է4**-ում: Թ.16 օրինակի 6-ատողը շարադրված է **Փ3**-ում, 4-ատող շարադրանքի 1-2 տողերը նախընթացին համադրվելով ընթանում են նույն հ/ձ-ով **Է4** ձ/կ-ում, իսկ 3-4 տողերում անցում է կատարում նույն հիմնաձայնով սկզբնական **Փ3** ձ/կ:

Անձրևաբերության երգերի մյուս՝ ք.3 «Քամբախ ըլի էս տարին» օրինակում խոսքային կառույցը, կանոնիկ շարադրանք չունի և առաջին հայացքից ազատ հանկարծաբանական կերտվածք է հիշեցնում: Նրանում ընդգրկված առանց հանգավորման համաչափ տողերը, ինչպես առաջին և վերջին տների սկզբնատողին հաջորդող երկու 11-ավանկ կառույցները, նպաստում են մեղեդու համաչափ շարադրանքին: Ամբողջական շարադասության մեջ պարզորոշ երևում է *երկմեծավերջ* ուղքերի գերակայությունը: Նմուշի հիմքում **Փ4** ձ/կ-ն է կվարտա հնչյունաձավալով: Օժանդակ հենակետերից 3-րդ աստիճան քայլերի բազում կրկնություններով ընդգծված շարադրանքն ու տոնիկա ձգտող ինտոնացիոն դարձվածքները երգատեսակի տիպային հատկանիշներ են:

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ: Այլ տարածաշրջաններից գրանցած սրբավայրերի ինչպես նաև ուխտատեղիների շուրջ հյուսված բանահյուսական և երգային նշխարները պատկառելի թիվ են կազմում: Ժողովրդական հոգևոր երգերին պատկանող այս ժանրին հաճախ են անդրադարձել⁵: Երաժշտագիտական համակողմանի քննության է առնվել Հայաստանով մեկ սփռված վիպաքնա-

⁴ Կոմիտաս, ԵԺ հ. 13, էջ 172, Երևան, 2004:

⁵ Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը (հողվածների և ուսումնասիրությունների ժողովածու) Երևան, 2001, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

րական կերտվածք ունեցող Մշո Սուլթան Սուրբ Կարապետ վանքի շուրջ հյուսված երգերը, որոնց նու-տագրված նմուշների թիվը շուրջ երկու տասնյակի է հասնում⁶: Մեծ արժեք են ներկայացնում Կոմի-տասի գրառած յոթ օրինակները⁷, որոնք ի թիվս մյուս նմուշների, օգնում են առավել ամբողջական պատկերացում կազմել դրանց երաժշտական առանձնահատկությունների մասին:

Վայոց Ձորի գիտարշավների ընթացքում գրառվել է *Կարապետականքի* հրաշագործությունները գովերգող երգերի երկու նմուշ, որոնք այլ տարածաշրջաններից գրառած օրինակների համեմատ, առավել ամբողջական են⁸: Դրանք թեև գրի են առնվել տարբեր ժամանակներում, գյուղերում ու տարբեր բանասացներից, սակայն մի շարք ընդհանրություններ ունեն: Դրանք բովանդակությամբ մոտ են, կառուցվածքով բանահյուսական տեքստերը թե՛ կրկներգ-կրկնակային տողերով, և թե՛ հիմնատողերով համաչափ բաժանումներով 8-ավանկ են: Նմուշները եղանակավորմամբ մոտ են կոմիտասյան «Սուրբ Կարապետն էր մշեցի» տարբերակին⁹ և հայոց վիպաքնարական երգերին բնորոշ ինտոնացիաներ ունեն: Երգի տարածված տարբերակների նման՝ սրանք էլ շարադրված են **Է4** ձևով, 6/8 չափում և հանդարտ ընթացք ունեն: Եթե թ.19-ում մեղեդու պատմողական ոճն ընդգծվում է ամբողջական տողերի կրկնությունների շնորհիվ, ապա թ. 20-ում դրան գումարվում են ֆրազների երկ կամ եռօղակ վարընթաց սեկվենցիոն կրկնությունները:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍ

Թեև հարսանեկան ծեսի տարբեր արարողություններում հնչող երգերի ու նվագների բազմաթիվ ձայնագրություններ և նոտային հրատարակություններ կան, սակայն, ցավոք, առ այսօր չի գրանցվել Հայաստանի որևէ պատմաաշխարհագրական գավառի հարսանեկան ծեսի ամբողջական երաժշտական պատկերը¹⁰: Հավաքածուում Վայոց Ձորից գրառված 37 հարսանեկան երգերը բովանդակում են հարս ու փեսայի և հարսի գովքերի 5, հարսի ծնողներից բաժանվելու 15 լալիք, հարսին խրատելու 4, հայրական տնից դուրս բերելիս, սկեսրոջ հարսին ընդունելիս կատարվող մեկա-կան, փեսայի մորն ուղղված կատակերգերի 4, հարսանեկան պարերգերի 4, աշուղական սիրավեպից փոխառնված, նաև աշուղների կողմից ստեղծված հարսի գովքերի 1-ական օրինակ:

Ցավոք, տվյալ տարածքի հարսանեկան ծիսակարգի երաժշտական տեքստն ամբողջությամբ չի արձանագրվել ու պահպանվել: Սակայն, մեր գիտարշավային հավաքածուն օգնում է որոշակի պատկերացում կազմել ծեսի երաժշտական կերտվածքի մասին ու հնարավորինս համակարգել XX դարի կեսերին տվյալ տարածքի երաժշտական բարբառի բնորոշ հատկանիշները:

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ԳՈՎՔ: Շարքի թ.1՝ հարս ու փեսայի «Հեյ, Աթամ, հե՛յ Եվա» գովքը գրանցվել է բանաստեղծական տեքստի 11-վանկանի կրկնություններով համեմված երկու երկտողի չափով: Շարադրված է **h1** հիմնաձայնով 6-րդ աստիճանի առկայությամբ, բաց թողնված 5-րդ աստիճանով **Փ3/4** ձևով: Բնորոշվում է 8/8 չափում 7 տակտ ընդգրկող, մեկ երաժշտական պարբերության մեջ

⁶ Տե՛ս **Քաղղասարյան Ա., Դիլանյան Ե., Խուրաբաշյան Կ.**, Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը // Վայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը (հողվածների և ուսումնասիրությունների ժողովածու), Երևան, 2001, էջ 29:

⁷ **Կոմիտաս**, ԵԺ հ. 9, թ. 110, Երևան, 1999, հ. 10, թթ. 96-100, հ. 11, թ.79, Երևան, 2000:

⁸ Թ. 19-ը պարունակում է եղանակավորմամբ տարբերակվող երեք քառատող, թ. 20-ը՝ ավարտուն 5-ատող նախընթեր կրկներգ, և կրկնակային տողեր պարունակող երկտող ու քառատող տներ: Նմուշները գրի են առնվել 7 տարվա (1990 և 1997) տարբերությամբ:

⁹ **Կոմիտաս**, ԵԺ հ.10, թ. 96, Երևան, 2000:

¹⁰ **Պիկիչյան Հ.**, Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում, Երևան, 2012, Ը. 127:

ծավալվող մեղեդու 2-րդ տակտի *c-d-e-g* մաժոր-անհեմիտոն ելևէջային դարձվածքի եռակի կրկնությամբ: Այն համապատասխանում է բովանդակության ուրախ, լուսավոր երանգավորմանը: Նմուշի չափական կերտվածքը բնորոշ է վիպերգերին և ներքին չափակարգով երգայնացված ասերգերին:

ՃԱՂԿՈՑ ԵՐԳԵՐ: Հարսի հանդերձների գովքերի թ.2՝ «Շնորհավոր, հա, շնորհավոր», թ. 3 և 4 «Ասեք՝ շնորհավոր» և թ.5 «Հարսանիքը եկավ» երգերն ունեն լադային և տաղաչափական կառույցների ընդհանրություններ: 7-ավանկ թ. 2-ը և 5-ավանկ թ. 3-ն ու 4-ը ընթանում են *էոլսկան* ձ/կ-երում, իսկ թ.5-ի 11-վանկանի գույգ հիմնատողից և գույգ կրկնակային տողից կազմված քառատողը սկսվելով **Է3/5** ձ/կ-ում պարբերությունը եզերող կադանսային դարձվածքում միայն անցում է կատարում և հաստատվում նույն հիմնաձայնով **Փ5** ձ/կ-ում: Վանկաչափական կառուցվածքի առումով՝ 5-ավանկ տողերից կազմված թթ. 3, 4 «Ասենք շնորհավոր»-ները համանման են իրենց *երկմեծավերջ, ավարտեղ* բանաձևով: «Հարսանիքը եկավ» թիվ 5-ի տողերի 6+5 կերտվածքը վերջավորող 5-ավանկ բաղադրիչները նույնպես նույն *բանաչևն* ունեն:

ՀԱՐՍԻ ԼԱՅԵՐ: Այս խմբի 15 նմուշից 5-ը՝ թ.6-10-ը «Հարս եմ գնում» երգի տարբերակներն են: Երգի բանաստեղծական տեքստը կազմված է 9 և 11-վանկանի երկտողերից: Բոլոր տարբերակները գրանցվել են **Է4/5** ձայնակարգում և ունեն միևնույն լուսավոր երանգ: Թ.10-ը ինտոնացիայով ու ռիթմով մոտ է լաիքներին: Ընտանիքից զատվելու թախիժն ընդգծվում է սեղմ հնչյունածավալով: Բովանդակությամբ այս շարքին կարելի է դասել թ.11՝ հարսի լացը ևս: Սակայն, խոսքային կառույցով ու եղանակով այն տարբեր է: Բանաստեղծական տեքստն առանց կրկնվող արտահայտությունների ու բացականչությունների 11-վանկանի (6+5) երկտող է, խոսքը՝ բացականչություններով, կրկնվող բառերով ու բառակապակցություններով մոտ է ազատ շարադրանքներին: Ազատ ձևաչափն արտացոլվել է փոփոխական չափակարգերում և խոսքային կառույցներում: Նմուշը նախորդների նման **Է4** ձայնակարգում է շարադրված, պարունակում է վիպական երգերին բնորոշ վերընթաց թռիչքներ, որոնց հաջորդող հիմնաձայն ձգտող վարընթաց թավալումները թախժի դրամատիկ երանգ են հավելում նրան:

Հարսի լացերի մյուս խումբը «Տանում են, աղե ջանի» հինգ տարբերակներն են: Դրանցից երեքում (թ.13-15) բանասացները ներկայացրել են նաև նախընթեր և վերջընթեր նվագարանային հատվածներ: Նմուշները հետաքրքիր են ձ/կ-ային կառույցներով՝ թ.14-ն ու 17-ը շարադրված են **Ի3 մաժոր**, իսկ թ.12 և 13-ը **Ի3 մաժոր անհեմիտոն** ձ/կ-երում: Նվագարանային մասեր պարունակող շարքի թ.15 օրինակն ընթանում է երկու ձ/կ-երում՝ **Է3** -ից անցում է կատարվում 1 տոն ցած **Հ4** ձ/կ: Թ.16 երկձ/կ օրինակում, սկզբնավորող **Ի3** ձ/կ-ի 3-րդ աստիճանի խրոմատիկ կիսատոնով իջեցման՝ հետևանքով ավարտներն ամրագրվում են **Է3** ձ/կ-ում: Այսօրինակ ձայնաստիճանների խրոմատիկ փոփոխությունների հետևանքով առաջացած ձ/կ-ային անցումները հաճախ են կիրառվում հայ գեղջուկ երգարվեստում և ունեն սահուն, բնականոն ընթացք:

Թ.19՝ «Բեր ձեռքդ համբուրեմ, մայրիկ» երգի տարբերակներ հանդիպում են այլ շրջաններում ևս: Մեր տարբերակում չնայած տողերի ներքին կառույցների տարաբնույթ շարադրանքին՝ բանասացը բոլոր տները երգել է նույն եղանակավորմամբ: Մեղեդին երկձայնակարգ կառույց ունի՝ **Ի3**-ին համադրվում է կվարտա ցած **Ի3**-ը, այնուհետև անցում է կատարվում կվարտա վեր՝ սկզբնական ձ/կ: Շարքի թ.20 երգը, 8-ավանկ քառատողերի 4:4 բաժանումով նման է թ.19-ին: Կարտի և բաժանման թեման դրսևորվում է դատեր և մոր երկխոսության ձևով: Նմուշի երկձ/կ շարադրանքը սկսվում է **Գ5** ձ/կ-ում¹¹, որը բնորոշվում է 4-րդ բարձրացված (+4) աստիճանով: Երգի 2-րդ տողի «*Այժմ քեզնից...*»

¹¹ Տե՛ս՝ **Кущнарев Х. С.**, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 547.

բառերը շարադրվում են նախընթաց հիմնաձայնով **Ի5** ձ/կ-ում: Այնուհետև, անցնում է կատարվում սկզբնավորող **Գ5** (+4) ձ/կ, որտեղ էլ երգն ավարտվում է:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՐԱՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ: Հավաքածուում տեղ է գտել հարսին ուղղված մաղթանքների և խրատական երգերի չորս նմուշ: Թ.21՝ «Էս տունը թող շեն լինի» երգի 1-ին տունը օջախի օրհնության տեքստն է, որին հաջորդում է հարսին խրատելու 2-րդ և 3-րդ տները: Հաջորդ նմուշը բովանդակում է միայն օջախն օրհնելու քառատող: «Հարս ջան, խելոք կլինես» թ.23-ը և նրա տարբերակը թ. 24-ը բովանդակում են միայն հարսի խրատներ և բանաստեղծական խոսքի 7-ավանկ քառատողերով և դասական քառակուսի պարբերությամբ, երկմեծավերջ+ավարտեղ խոսքային կերտվածքով՝ նման են թ. 21 և 22-ին: Մակայն ձ/կ կառույցներերով բոլոր 4 նմուշները տարբեր են՝ թ.21-ը սկսում է **հիպոհ** –ում, ավարտվում է փ.սեքստա ցած **Փ3**₊₅ ձ/կ-ում, թ.22-ը շարադրված է **Փ3/4**, թ.23-ը՝ **Ի3/5** **օկրավային**, իսկ թ.24-ը **Է3/5** ձ/կ-երում:

Այսպիսով՝ Վայոց Ձորի հարսանեկան ծիսաշարի հարսի լացերը և խրատական երգերը պարունակում են մեկ պարբերության մեջ ամփոփված պարզագույն նմուշներից մինչև միմյանց սերտորեն փոխկապակցված, միջանցիկ զարգացման հատկանիշներով եռամաս շարադասություններ: Որպես ընդհանրական հատկանիշ՝ շարքի երգերի մեծ մասի երաժշտաբանաստեղծական տողերին հատուկ է ձայնակարգերի բարձրակետային հնչյուններից մինչև հիմնահնչյուն վարընթաց աստիճանական շարժումը:

ՀԱՐՍԻՆ ՏՆԻՑ ԳՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ԵՐԳ: Վայոց Ձորի հարսանեկան երգերի շարքում տեղ է գտել սակավ հանդիպող հարսին հոր տնից դուրս բերելիս կատարվող «Գուրս եկ, հեյրան...» թ.25 երգը: Բանաստեղծական կերտվածքով քառատող շարադրանքը 8, 5, 8, 5 կառույցն ունի, խոսքային շարադասության մեջ գերակայում են **քորիյանք** ոտքերը, ընթանում է **Է4** ձ/կ-ում:

ՍԿԵՄՐՈՋ ԵՐԳ: Հարսին յուր օջախ ընդունելիս սկեսրոջ սակավ հանդիպող երգերից է «Արի, բալե ջան» թ.26-ը: Նրա ազատ-չափածո բանաստեղծական կառույցն անհամաչափ տողերից բաղկացած երկու քառատող է կազմում: Ինչպես հարսի լացերում, այստեղ էլ խոսքային շարադասություններում գերակա է **մեծավերջ** ոտքը, իսկ երաժշտական ֆրազների հիմնառանցք **Փ4** ձ/կ-ի բարձրակետ՝ 4-րդ աստիճանից հիմնաձայն ձգտող ելևէջները նպաստում են պատմողական շարադրանքին:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳԵՐ: Ծիսակարգում առ այսօր կիրառվում է, տարբեր շրջաններում տարածված, **թագվորի** մորն ուղղված կատակերգը: Մեր հավաքածուում տեղ է գտել երգի 4 տարբերակ: Շարքի թ. 29 և 30 երգերում պահպանվել է տեղի հյութեղ բարբառը: Երգերի բանաստեղծական կերտվածքում գերակշռում են 7-ավանկ տողերը: Բոլոր նմուշները շարադրված են 6/8 չափում, երաժշտաբանաստեղծական տողերն ամփոփվում են գույգ, համաչափ տակտերում: Նմուշներից թ. 28, 29 և 30-ը շարադրված են **Ի3**՝ մաժոր ձայնակարգում, ընդգրկում են կվարտայից ոչ մեծ հնչյունաձավալ: Երկձ/կ թ.27-ը սկսվում է **հիպոհ4**-ում, կրկներգի ավարտին անցում է կատարվում և կադանսային դարձվածքով հիմնավորվում փոքր եռյակ ցած **Է3** ձ/կ-ը:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳԵՐ: Վայոց Ձորում գրանցվել են «Ֆուրկա» հարսանեկան պարերգի 3 տարբերակ և «Ժեկլորի պարի, հեյրան» պարերգ-պարեղանակը:

Վասպուրականում լայնորեն տարածված «Այ Ֆուրկա»-ն¹² տարբերակվելով Վայոց Ձոր է հասել

¹² Տե՛ս **Մելիքյան Սպ.**, Վանա ժողովրդական երգեր, ք.83, Երևան, 1927-1928, **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, հ. 4, ք.40՝ «Ֆուրկա, Ֆուրկա», 287՝ «Այ, Ֆուրկա», Երևան, 2005:

թե՛ այստեղ վերաբնակված բնիկ վասպուրականցի բանասացների միջոցով և թե՛ որպես պարսկահայերի նախնիներին վանեցիներից փոխանցված նմուշ: Բերված օրինակների ձ/կ-ային կառույցները տարբեր են: Թ.31-ն ու 33-ն շարադրված են **Է3** ձ/կ-ում, որի միևնույն հենքը չի ազդում պարերգերին հատուկ աշխույժ շեշտադրության վրա: Կվիմտա հնչյունաձևով ընդգրկող թ.32-ը սկսվում է **Է4** միևնույն ձ/կ-ում և միայն վերջնակադանում, ձ/կ-ային անցմամբ եզերվում է փ.տերցիա վեր՝ **Ի3** մածո - րում: Շարքի թ.34 «Ժեկլորի» պարերգ-պարեղանակը, ըստ բանասացի, Վայոց Ձորի Խաչիկ գյուղում է ծնունդ առել: Նմուշի երգային հատվածները 7-ավանկ երկտողեր են: Նրա երկմաս շարադրանքի 1-ին մասն ընթանում է **Է4** ձ/կ-ում: Այստեղ ստեպ-ստեպ ձ/կ-ի 2-րդ աստիճանը շարադրվում է կես տոն ցած, հավելելով նրան փոշուգիական երանգ: Նմուշի 2-րդ՝ մասում ձ/կ-ի հիմնառանցքն ընդլայնվում, դառնում է **Է5**:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍՈՒՄ ՀՆՉՈՂ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ: Հավաքածուում այդպիսիք երկուսն են: Թ.36-ը հայոց կենցաղում լայնորեն տարածված հարսի գովքերից է, որ հնչում է հարսին հանդերձելիս: Նմուշի մեղեդին ընդգրկում է գույգ ձ/կ-եր՝ երաժշտական պարբերության մեջ ամփոփված քառատողերից երեքը շարադրվում են **հիպոհ** ձ/կ-ում, վերջին տողի սկզբից անցում է կատարվում փ.տերցիա ցած **Է4**: Թ.37-ը, որ «Աշուղ Ղարիբ» աշուղական սիրավեպից է, կատարվում է հարս ու փեսին ուղղված բարեմաղթանքների ժամանակ: Նրա 8-ավանկ քառատողերը շարադրված են նույնպես երկու ձ/կ-երում՝ **Ի3** ձ/կ-ից անցում է կատարվում փ. տերցիա ցած **Է4**: Վերջինս հատուկ է հատկապես աշուղական սիրավեպերին:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆՎԱԳՆԵՐ ԵՎ ՊԱՐԵՂԱՆԱԿՆԵՐ

Վայոց Ձորի ներկա հավաքածուն հարուստ է հարսանեկան ծիսական նվագներով ու պարեղանակներով, որոնց թվում հանդիպում են եզակի նմուշներ:

ԱԼՅՈՒՐ ՄԱՂԵԼՈՒ ՆՎԱԳ: Չայնագրվել է առ այսօր չգրառված այս եղանակի երկու տարբերակ: Դրանց վոկալ կատարումները հնչել են նույն բանասացի կատարմամբ, հաջորդաբար և նեկայացվել որպես մեկը մյուսին լրացնող տարբերակներ: Երկուսն էլ ընթանում են 6/8 չափում, ներկայացնում են երկտակտ ֆրազի տարբերակված բազմակի կրկնություններ: Պարային կերտվածքով նմուշները շարադրված են 1-ինը **Է4**, 2-րդը **Ի3/05** անհեմիտոն ձ/կ-երում: 2 նմուշներում էլ կարևորվում են 1-05-1 թռիչքներով դարձվածքները՝ որոնք իրենց պայծառ հնչերանգներում կարծես դրոշմում են ալյուր մաղող կանանց տոնական տրամադրությունը:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍԻ ԿԱՆՉԵՐ: Հավաքածուում մեծ արժեք են ներկայացնում ծեսի յուրօրինակ *կանչ-խորհրդանիշ* դարձած «Սահարիների» 5 նմուշները: Բացի թ.5 «Սահարի-3»-ից, որ միայն ազդ-կանչի հիմնական շարադրանքն է ներկայացնում, մյուսները երկմասանի կառուցվածք ունեն, որոնց 1-ին մասերը շրջապատի ուշադրությունն ակնկալող նվագներ են, 2-րդ մասերում շարադրվում են պարային բնույթի երբեմն երկու բաժնից կազմված հավելանվագներ: Սահարիներն իրենց կառուցվածքային, ծավալային, ելևէջակարգերի շարադասության և կատարման ձևերի առումով բազմազան են, հագեցված են կատարողական հնարների կատարելություն ներկայացնող փայլով, առանձնանում են բարձրակետերի ընդգծված ցուցադրանքով ու դրանց հաջորդող մինչև հիմնաձայն վարընթաց ելևէջադարձումներով, դարձվածքների բազմակի տարբերակված կրկնություններով: Որպես բնորոշ օրինակ անդրադառնանք թ.4 «Սահարի-2»-ին: Նմուշի 1-ին մասը՝ արևելյան նվագա -

րանային մուդաններին հատուկ ազատ, անկաշկանդ չափակշռույթ ունի: Այն ընթանում է *es1* դամ-
ձայնառության ուղեկցությամբ **B3/5** ձ/կ-ի **g2-b2** բարձր ոլորտում և ընդգրկում է անհամաչափ զույգ
նախադասություններից կազմված երեք երաժշտական պարբերություն: 2-րդ պարբերության մեջ,
հիմնաձայն ձգտող աստիճանական վարընթաց սահքում կիրառվել է սեկվենցիոն տարբերակման
ձևակարգը, որտեղ նվագածուն 3-րդ ցած աստիճանի մասնակի կիրառությամբ՝ էոլական հնչե-
րանգով հարստացրել է շարադրանքը: 2-րդ մասում Սահարուն հաջորդող Քոչարին, ապա և Վերվե-
րին ծավալով մի քանի անգամ գերազանցում են նրան: Չուռնի ելևէջային բարդ հնարներով համեմ-
ված այս պարեղանակները, սկսվելով *es* հիմնաձայնով **Փ3** ձ/կ-ում, ավարտվում են փոքր տերցիա
ցած **E4** ձ/կ-ում: Շարադրանքը պարունակում է քրոմատիկ քայլերով ու ալտերացված աստիճան-
ներով շուրջ 15 ձ/կ-ային անցումներ, ընդգրկելով փոքր դեցիմա հնչյունաձայնալի:

Անդրադառնանք նաև թ.6 «Սահարի-4»-ին, որն ունի «Կոխի նվագ»-ի հավելված: Հենց սկզբից
այն ընթանում է դիոլի ուղեկցությամբ 6/8-ում: Չ/կ-ային առումով Սահարու հիմնական շարադրանքը՝
նմուշի 1-ին մասն ընդգրկում է շուրջ մեկ տասնյակ անցումներ՝ սկսելով **f2** հիմնաձայնով **հիպոՓ** ձ/կ-
ում, ավարտվում է **c2** հ/ձ-ով **E3/4**-ում: Սահարուն հավելված «Կոխի նվագ» **B3/5** օկտավային ձ/կ-
ում է: Չայնառության **as1, f1, c2, as1** շարքը մեղեդու ձ/կ-երի հիմնառանցքների հետ, երբեմն ժամա-
նակավոր դիսոնանսներ է առաջացնում, ինչն էլ բնորոշ է հայոց նվագարանային երաժշտարվեստին:

ՀԱՐՍԻՆ ՏՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՆՎԱԳՆԵՐ: Հավաքածուի պարունակած հարսանեկան նվագներից 4-ը՝
թ.8-11-ը, կատարվում են հարսին տանից դուրս հանելիս: Առաջին երկուսը վոկալ կատարմամբ են,
թ.10-ը ձայնագրվել է նվագարանային կատարմամբ, թ. 11-ը, որ վոկալ-նվագարանային կատարմամբ
է, ունի՝ «Արագ ուստա, այ ուստա» անվանումը: Հետաքրքիր կառուցվածքի է նմուշներից թ.10-ը: Նրա
երկմասանի կառույցի իմպրովիզացիոն շարադրանքի առաջին և պարային՝ երկրորդ մասերն
ընդգրկում են փոքր նոնա հնչյունաձայնալ, պարունակում են մանր տևողությունների շրթայուններից
հյուսված, զարդահնչյուններով հարուստ դարձվածքներ: Սկսվում է նվագը **B3/5** սակավ հանդիպող
ձ/կ-ում, ապա անցում է կատարվում *մ. տերցիա վեր* **E3/5**, հետևում է կարճատև անցում *մ. տերցիա
վեր* **B3** և վերադարձ **E3/5**, որն էլ եզրափակիչ կադանսային դարձվածքով հաստատվելով բերում է
առաջին մասի ավարտին: Թ.10-ի երկրորդ մասում հաստատվում է **E3/5** ձ/կ-ը:

Թ.11-ը, որ եղանակավորմամբ թ.8-ի վոկալ-նվագարանային տարբերակն է, ձայնագրվել է վոկալ
կատարմամբ: Այն ունի 7-ավանկ երկտողերից կազմված խոսքային կառույց: Քառատակտ նվագա-
րանային նախաբանը բերում է երգի նվագարանային շարադրանքին: Այն զույգ նախադասություն
պարունակող պարբերության ձև ունի, որոնցից 1-ինը ընթանում է **E3** ձ/կ-ում, իսկ 2-րդը համադրվե-
լով նրան շարադրված է փոքր տերցիա ցած՝ **B3**-ում: Չնչին տարբերությամբ նվագարանային շարա-
դրանքին հաջորդում է երգային հատվածը, որն ինչպես նախընթաց նվագարանային հատվածը ունի
2:2, դասական քառակուսի պարբերության կերտվածք: Շարունակության մեջ նմուշն ունի նույն
մեղեդու նվագարանային երկու քիչ փոփոխված տարբերակային շարադրանք ևս:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԹԻ ՆՎԱԳ: Հավաքածուի թ.12 օրինակը Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում
առ այսօր տարածված հարսանեկան երթի ժամանակ կատարվող, «Կալոսի պոկեն» նվագի տեղա-
կան տարբերակն է: Ունի **Փ3** ձ/կ-ում շարադրված քառատակտ նախաբան և երկմաս շարադրանք:
1-ին մասը երեք պարբերությունից է, որոնցից առաջինը շարադրված է **Փ4** ձ/կ-ում, 2-րդը համա-
դրվելով նրան՝ մեծ տերցիա ցած **B3/4**-ում, 3-րդ պարբերությունը, որ կազմված է 3՝ անհավասար (4,
3, 5) նախադասություններից, սկսվում է **B3/4**-ում, ապա անցնում է *es1* հիմնաձայնով **E3**: 1-ին մասի
ավարտին անցում է կատարում **c1** հիմնաձայնով **E3** ձ/կ՝ որով նախապատրաստվում է հաջորդ մասի
մուտքը: Նմուշի 2-րդ մասը, որ ամբողջությամբ ընթանում է **c1** հիմնաձայնով **E3/5** ձ/կ-ում, շարադրում
է այլուր էլ հայտնի «Կանաչ ծառի տերևը» պարերգի տարբերակված մեղեդին: Ավարտվում է նմուշը

c1-b1 հարցական երանգ պարունակող թռիչքով, ինչը նվագածուների հաճախ կիրառվող սիրված հնարներից է:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆԺՈՒՅԳՆԵՐԸ ԽԱՂԱՑՆԵԼՈՒ ՆՎԱԳՆԵՐ՝ ՉԻՎԵՆՆԵՐ: Հավաքածուում ընդգրկված թվով 5 ձիավեցնող տարբեր եղանակավորում ունեցող երկու խումբ են կազմում: Խմբերից մեկը՝ թ.13 և 17-ը վոկալ կատարումներ են, ձայնագրվել են նույն գյուղում, տարբեր բանասացներից և նույն եղանակի տարբերակներն են: Երկուսն էլ շարադրված են 6/8 չափում, մաժոր ձայնակարգերում: Չիեր խաղացնելու նվագներ լինելով՝ ունեն պարային ընդգծված շեշտադրում: Նմուշները ծավալվում են գույգ նախադասություն պարունակող դասական, քառակուսի պարբերություններում, կրկնվելու պարագային տարբերակվում են՝ ունենալով մոտիվային զարգացման տարբեր:

Չիավեցնողի մյուս խումբը՝ թ.14,15 և 16-ը, որ նվագածուների եռյակի կատարմամբ է, ձայնագրվել է Կեչուտ գյուղում, նույն անձանց կատարումներից: Դրանք ունեն ոճական, չափակարգային, ձ/կ-ային և ելևէջադարձման ընդհանրություններ, որով էլ միմյանց տարբերակներ են հանդիսանում: Երեք նմուշներում էլ գերակայում է *a1-a2* հիմնաձայներով **Ի օկտավային** ձ/կ-ը, որը խարսխվում է դիտլի պարերգերին բնորոշ ռիթմական կառույցների վրա: Իր ձ/կ-ային անցումների առատությամբ առանձնանում է 104 տակտ ընդգրկող թ. 15-ը, որը հիմնաձայնի օկտավ վեր՝ բարձր ձայնալուրտում հնչյունագարդված ընդգծումներով համանման է *արևազայի ծիսական* նվագներին՝ Սահարիներին:

ՍԿԵՍՈՒՐԻ ԵՎ ՍԿԵՍՐԱՅՐԻ ԾԻՍԱԿԱՆ ԿՈՒՅԻ ՆՎԱԳՆԵՐ: Ժողովածուն ընդգրկում է շարքի ծիսական թատերային-պարային¹³ կոխ բռնելու տեսարանին ուղղորդող նվագների ութ նմուշ: Որպես ընդհանրական հատկանիշ կոխի նվագներում կարևորվում է առանցքային ելևէջային դարձվածքների բազմակի ուղիղ կամ տարբերակված կրկնությունները: Սրա կողքին, նրանցում գերակայում են պարբերական չափակարգերը:

Կոխի նվագների ձ/կ-ային համակարգում գերակայում են իոնական (թ. 19, 20, 21) և փոյուզիական (թ. 23, 24, 25) ձ/կ-երը:

ՀԱՐՍԻՆ ԸՆԾԱՆԵՐ ՄԱՏՈՒՅԵԼՈՒ ՆՎԱԳ: Վայոց Ձորի հարսանեկան ծիսական նվագների շարքում գրառված եզակի նմուշներից է թ.26 «Հարսին ընծաներ մատուցելու նվագը»: Պարային բնույթ ունեցող մեղեդին ընթանում է 6/8-ում, *a* հիմնաձայնով **Է5** ձ/կ-ում: Ծարադրված է դասական 4:4 պարբերության ձևով, հնչում է երկար դուդուկի ներքևի ռեգիստրում: Մեղեդու շարադասության մեջ կարևորվում են պունկտիրային ռիթմական պատկերները, ուր նվագի 8 տակտանի եղանակը որոշ տարբերակումներով կրկնվում է: 5-րդ կրկնության ավարտն ունի մեկ տակտ հավելում՝ *a-g1-e1* ելևէջային անորոշությամբ ավարտվող վերջավորությամբ, որն ինչպես այլուր, նվագածուների նախասիրած ավարտներից է:

ՀԱՐՍԻ ԾԻՍԱԿԱՆ ՊԱՐԻ ՆՎԱԳՆԵՐ: Ժողովածուում ընդգրկված հարսանեկան ծիսակն նվագներից իրենց բազմազանությամբ, նրբերանգների առատությամբ առանձնանում են «Հարսնապարերը»: Գրանցված 11 նմուշից 9-ը վոկալ կատարմամբ են և գերծ են նվագարանային կատարումներին բնորոշ զարդուրտում դարձվածքներից: Հարսնապարերում գերակայում են երկու՝ միմյանց շղթայված, միմյանց լրացնող և կամ հակակշիռ պարբերություններից կազմված երկմասանի օրինակները: Գրանցից թ.29-ում 1-ին մասի 2:2 համամասն կառույցին հետևում է 3:2 անհամամասն շարադրանք ունեցող, եղանակավորմամբ նախընթացին լրացնող 2-րդ մասը: Երկմասանի թ.27, 35 նմուշների 1-ին

¹³ Պիկիչյան Հ., նշվ. աշխ., էջ 137:

և ք.34, 36 նմուշների 2-րդ պարբերությունները պարունակում են 3-ական նախադասություն, որ համադրվելով նրանց զույգը հանդիսացող 2-ական նախադասությունից կազմված պարբերություններին, բնորոշվում են ծավալային անհամամասնությամբ: Եռմասանի կառուցվածք ունեն ք.33-ն ու 37-ը: Թ.33-ի բոլոր 3 մասերը պարունակում են զույգ նախադասություններ՝ տակտերի 2:3, 2:2, 2:2 հարաբերությամբ, իսկ ք.37-ում միջին մասը 3 նախադասություն է պարունակում, որը մյուս մասերի հետ տակտերի 3:2, 3:4:3, 3:2 հարաբերությունն ունի:

Ինչպես երևաց Վայոց Ձորի «Հարսնապարերն» իրենց կառուցվածքով բազմազան են: Ձ/կ-երի շարադրանքը բազմատարր է: Մեկ ձ/կ-ում ծավալված 6 նմուշներից 2-ը **էոլական**, 2-ը **փոյուզիական**, 2-ը **իոնական** ձ/կ-երում են շարադրվում: **Երկ** ձ/կ շարադրությունները 4-ն են՝ ք.27-ում **Է4**-ից անցում է կատարվում մեծ երկյակ վեր **Փ14**, ք.32-ում՝ **Փ13**-ից փ.տերցիա վեր **Ի3** և ետ, ք. 33-ում՝ **Ի3/5**-ից փ.տերցիա վար **Է4** և ք.37-ում՝ **Փ14**-ից փ.տերցիա վեր **Ի3/5** և ետ: Թ.30-ի 44 տակտերն ընդգրկում են ձ/կ-ային 4 անցում՝ **f1** հ/ձ-ով **հիպոէ3**-ից փ.տերցիա վեր **հիպոԻ** և կրկին **հիպոէ3**, ապա քառյակ վեր **հիպոԻ**, այնուհետև փ. սեպտիմա ցած **Է4**:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՇՈՒՐՋՊԱՐԵՐ: Ժողովածուում ընդգրկվել են հարսանեկան ծիսական շուրջպարերի շուրջ երեք տասնյակ օրինակ: Դրանց մի զգալի մասը, ինչպես գյովնդները, քոչարիները և վերվերիները, հարսանեկան ծիսակարգից զատ կիրառվում են խնջույքների և տոնախմբությունների ժամանակ: Մեր պեղումների ընթացքում արձանագրվել են ձեռքին ամրագրված 6 շուրջպար՝ «Խնկի ծառն» ու «Ուռուֆանիի» 5 տարբերակները:

«Խնկի ծառը» կատարվում է Վայոց Ձորի կենցաղում առ այսօր տարածված, նորաստեղծ ընտանիքի խորհուրդը մարմնավորող կենաց ծառը զարդարելիս: Մեր ձայնագրություններից ք.39-ի երկմաս շարադրության դանդաղ մասում միահյուսվում են կոմիտասյան ձայնագրություններից «Ալագյազ սարն ամպել ա»¹⁴ սիրերգի տեղական տարբերակն ու նրան հաջորդող 6/8 չափում ընթացող սիրերգին մոտ պարեղանակը, որն իր վեր ու վար թռիչքներով հարում է կատակ պարերին և հիշեցնում է հայտնի «Մաշտիֆատ» պարերգ-պարեղանակը:

Հարսանիքին ամրագրված պարեղանակներից «Ուռուֆանին», բանասացների հավաստմամբ, ծիսակարգը եզրափակող՝ բոլոր հարսանքավորներին ասպարեզ հանող, հանդիսավոր շուրջպարերից է: Այլուր չհանդիպելու փաստը և միայն Վայոց Ձորի Խաչիկ գյուղում գրի առնված նրա 5 տարբերակները վկայում են պարեղանակի տեղում ծնունդ առնելու հավաստիությունը:

Հետաքրքիր է նվազածու Բորիս Բադալյանի ներկայացրած «Ուռուֆանու» երեք տարբերակներից ք.52-ը: Նմուշը Քարակոփի եկեղեցու մոտ Ալեքսանյանների տոհմական հավաքի ժամանակ կատարված տարբերակն է: Նվազածուն պարեղանակը ներկայացնելիս, մտովի վերապրելով իր իսկ նախկին կատարումն, աշխատել է առավել ամբողջական ներկայացնել պարատրքի հետ նվագի համապատասխանելու իրական միասնությունը: Ծավալում այս երկը կարելի է տրոհել երեք խոշոր բաժինների: 1-ինը՝ **a1** հիմնաձայնով **Է4/5** ձ/կ-ում շարադրված երկու բաժնից կազմված նախաբանն է, 2-րդը՝ հիմնական ձ/կ-ում շարադրված բուն պարեղանակն է, 3-րդը՝ համադրությամբ **c1** հիմնաձայնով **Փ3** ձ/կ-ում ընթացող բուն պարեղանակի շարադրանքն է:

Վայոց Ձորի հարսանիքներում հնչող շուրջպարերից առավել կիրառելին գյովնդներն են: Ժողովածուում տեղ գտած փոկալ կատարմամբ 8 նմուշներից 4-ը համեմատաբար դանդաղ ընթացք ունեն և որպես տարատեսակ որակվել են «Ծանր գյովնդներ»: Սովորական գյովնդներում (ք.40-43) ու ք.44-45 ծանր գյովնդներում շարադրանքը երկու պարբերության չափ է, որոնցից, որպես օրինաչափություն, 2-րդները 1-ինների տարբերակներն են: Դրանցում հիմնական կառույցները եղանակավորմամբ ծավալվում են մեկ պարբերության սահմաններում, հիմնականում ընթանալով 6/8 չափում: Գյովնդներին է

¹⁴ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ.11 թիվ 286:

հարում ք.48 «Ծանր յայլին»: Այն երկմասանի է, որի 1-ին մասը 6/8-ում շարադրված 4:4 դասական քառակուսի կառուցվածքի գյովնդ է, իսկ 2-րդը՝ 4/8-ում ընթացող, եղանակավորմամբ նախընթացից էականորեն տարբեր, երեք երկտակտ նախադասություններից կազմված «Յայլի է»: Տարբեր եղանակավորում ունեցող այս երկմասանի նմուշում մասերն իրար են կապվում **Է3-Է5** ձ/կ-երի շնորհիվ:

Գիտարշավների ընթացքում կատարված հարցման հիմքով կարելի է վստահորեն ասել, որ Վայոց Ձորի հարսանիքներում իրենց կայուն տեղն ունեն քոչարիներն ու վերվերիները: Դրանք հավաքածուում 11-ն են: Դրանցից 5-ը՝ ք.54-58-ը քոչարիներ են, 3-ը՝ ք.59-61-ում քոչարին զուգորդվում է վերվերիի հետ, իսկ ք.62-64-ը միայն վերվերիներ են: Քոչարիներն իրենց կառուցվածքով տարբեր են: Հանդիպում են նմուշներ որոնք ունեն նախապատրաստող՝ 1-ատակտ նախանվագներ (ք. 57, 58, 59): Թ. 54-ն ու ք.59, 60, 61-ի քոչարիները և ք. 57-ի սկզբնավորող պարբերությունն ունեն 4:4 դասական քառակուսի կառուցվածք, ք.56-ը 4:4:4՝ 3 նախադասությունից է, ք.55-ը կազմված է 5(2:3):5(2:3) հարաբերությամբ պարբերությունից, ք.57-ի 2-րդ և 3-րդ անցումները 4:6 (2:2+2:2:2) կառուցվածքն ունեն: Բարդ՝ 4 մասանի կառուցվածք ունի ք.58 քոչարին: Նրա 1-ին մասը 4:4:4=A-B-A՝ կառուցվածքի է: 2-րդ մասը՝ 4:2=C, 3-րդը մոտիվային զարգացում պարունակելով՝ եղանակավորմամբ 1-ինից ու 2-րդից տարբեր՝ 4:2+4:2 = D-E կառուցվածքի է, 4-րդ մասը տարբերակելով կրկնում է 1-ին և 2-րդ մասերը (A՝-B՝-A՝+ C):

Ձ/կ-ային առումով քոչարիները նույնպես բազմազան են: Թ.55 և 56-ը շարադրված են **Ի3**-ում, ք.59, 60, 61-ը՝ **Փ3**, ք.54-ը՝ **Դ3**, ք.57-ը՝ **Հ4** ձ/կ-երում: Իսկ ք. 58-ը սկսում է **Փ3**-ում, անցնում մեծ սեկունդա ցած **Է4**, ապա մեծ սեկունդա վեր անցմամբ վերադարձ է կատարվում սկզբնական **Փ3**, ինչով էլ երկն ավարտվում է:

Վերվերիները, որ ք.59,60,61 օրինակներում զուգորդվում են քոչարիներին, ընթանում են 6/8 չափակարգում և պարզ՝ 4:4 կառուցվածք ունեն, շարադրվում են նույն ձ/կ-երում, ինչ և քոչարիները: Թ. 62 վերվերին կազմված է 6:6:6 տակտերից բաղկացած 3 նախադ.-թյուններից, որոնք կրկնվելիս տարբերակվում են: Թ.63-ը բարդ 3 մասանի կառուցվածք ունի: 1-ին մասը A-A՝-B = 4:4:4 հարաբերության պարբերություն է, 2-րդը՝ A՝-B՝ = 4:4, 3-րդը C-A՝-A՝-B՝ զարգացում ներկայացնող կառուցվածքներն ունեն:

Ինչպես տեսնում ենք, Վայոց Ձորի հարսանեկան պարեղանակներում պարզ կառույցների կողքին հանդիպում են ընդգրկուն, բարդ կառույցներ ևս, որոնք գիտական-գեղարվեստական բարձր արժեք են ներկայացնում:

ՀՈՒՎԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԵՍԻ ԵՐԳԵՐ

Վայոց Ձորից գրանցած հարսանեկան ծիսաշարի մեծաթիվ օրինակների կողքին ձայնակարգերի ուշագրավ զուգորդումներով, չափակշռությալին ազատ-հանկարծաբանական ինքնատիպ կերտվածքով, կառուցվածքային ու ոճական բնորոշ հատկանիշներով՝ առանձնանում են մահերգերը¹⁵: Հավաքածուում տեղ գտած 22 նմուշից 10-ը հանգուցյալին հրաժեշտ տալիս հարազատների կողմից կատարվող լալիքներն են: Հավաքածուում ընդգրկված 8 ողբերը եղանակավորմամբ էականորեն տարբերվում են լալիքներից: Ժողովրդական ողբերգուների երգած ողբերն առանձնացվել են որպես ենթատեսակ և որպես այդպիսին առանձին հետաքրքրություն են ներկայացնում:

Մահերգերի բոլոր նմուշներն, առանց բացառության, շարադրված են ազատ-հանկարծաբանական ոճով, ազատ չափակարգերում:

¹⁵ Այս մասին մանրամասն տես՝ Պիկիյան Հ., նշվ. աշխ., էջ 166-176:

Լալիքները բնորոշվում են համեմատաբար փոքր հնչյունաձավալներով, ձ/կ-երի 4-րդ, 3-րդ աստիճաններից վար՝ դեպի հիմնաձայն աստիճանից 3-4 հնչյուններից բաղկացած մարդկային լաց հիշեցնող մոտիվների բազմակի կրկնություններով: Բանաստեղծական խոսքը լալիքներում հանպատաստից հորդալով, ազատ շարադրության է: Երբեմն լացին միահյուսվելով այն դառնում է կցկտուր, աղճատ: Ողբերը բնորոշվում են ընդգրկում եղանակավորմամբ, առավել երգային են, ունեն համեմատաբար լայն հնչյունաձավալ: Ողբերգերում բանաստեղծական տողերի անհամաչափության պարագային էլ հանդիպում են հանգավոր տողեր, որոնք հաճախ ունենում են խոհափիլիսոփայական բովանդակություն: Ժողովրդական որբերգուների կատարումներում նկատելի է ելևէջադարձումների հղկված, հնչյունազարդ դարձվածքներ, ձայնակարգային առավել բարդ անցումներ, բանահյուսական տեքստերի տաղաչափական կանոնավոր շարադրանք:

Հետաքրքիր են և բազմազան մահերգերի ձայնակարգային կառույցները:

Ներկայացնում ենք դրանք իրենց հնչյունաձավալներով, ձ/կ-ային անցումներով և նրանցում տեղ գտած ալտերացված հնչյուններով.

| №№ | Անվանումը | Չայնակարգը | Հնչյունային ծավալը | Ալտերացված հնչյուններ | Չայնակարգային անցումներ |
|---|--------------------------|-------------------|--------------------|-----------------------|---|
| Լալիքներ | | | | | |
| 1. | Սպանդերքն ես մտել | Փ3 | փբգ.4 | | |
| 2. | Մանկությունից չուրախացար | Փ3/4 | մբ.4 | +07 | |
| 3. | Չաներ բալաս | Փ4 | փբգ.6 | +07 | |
| 4. | Թագավորի նման ապրող | ԻԷ3 անհեմ | մբ.5 | | |
| 5. | Նանայիդ վիզը ծռավ | Փ4 | մբ.5 | | +1 Է3 |
| 6. | Բալաս, բալաս, բալաս | Փ3/4 | մբ.4 | | |
| 7. | Ոսկի, բալաղ մեռնի | Փ4 | մբ.5 | | |
| 8. | Վայ, Ոսկի ջան | ՓԷ3/4 | մբ.4 | | |
| 9. | Այայ, բալես, այայ | Փ3/4 | մծ.6 | | |
| 10. | Այ բալա ջան | Փ4 | փբգ.4 | | +1 Ի3 |
| Ողբեր | | | | | |
| 11. | Ախ, իմ մեր ջան | Փ3 | փբ.6 | +07 | -4 ԷԻ5/4 |
| 12. | Բալա ջան, ինչո՞ւ | Ի3 | մծ.9 | | -3 ԷՓ3/5 |
| 13. | Ասեմ բալայ, ջանս բալաս | ԻՓ5 | մ.6 | | |
| 14. | Լացեք, ըկերներս, լացեք | ՓԷ3/5 | մծ.6 | | |
| 15. | Լացեք, ընկերներս, լացեք | ԷՓ3/5 | մծ.6 | | |
| 16. | Քո չոր հացը | ԻԷ3 անհեմ | փբ.6 | +1, -4 | |
| 17. | Թորախտով հիվանդ պառկած | ՓԷ3/5 | փբգ.7 | +07 | |
| Ժողովրդական որբերգուների կատարումներ | | | | | |
| 18. | Գերեզմանիս քարի վերա | Ի3/5 օկրավ | փբ.10 | | |
| 19. | Ախ, իմ մեր ջան | Փ3 | մբ.5 | | +1 հիպոհ , -5 Է3 |
| 20. | Հեյ, վախ, հեյ, վախ սիրոս | Է3 | մբ.4 | | |
| 21. | Էս ի՞նչ էղավ ինձ հետ | Փ3 | փբ.7 | | +1 Ի3 , -3 ՓԷ4/5 (+2, -5), +3 հիպոհԻ3 , -3 ԷՓ4/5 |
| 22. | Անիի ողբը | Ի3/5 | փբ.7 | | -3 ԷՓ4 (-2), +3 Ի3/5 , -3 ԷՓ4 (-2) |

Ինչպես տեսնում ենք Վայոց Ձորի մահերգերում գերական (22-ից15-ը) **Փռյուզիական** ձ/կ-երն են, որոնցից թ.3-ը **լոկրիական**, թ.9, 14, 17-ը **էոլական** երանգներով են, թ.5, 11, 19, 21-ը սկսվելով **Փռյուզիական** ձ/կ-երում ավարտվում են **էոլական**, թ. 10-ը **Իոնական** ձ/կ-երում: Մեկ մնուշ շարադրված է **փռյուզիական** երանգով **Ի5**, թ.4-ը և 16-ը՝ **Իէ3անհենհյրոն** ձ/կ-երում, քաղաքային երգարվեստի դրոշմը կրող ողբերից թ.18-ն ընթանում է **Ի3/5օկրավային** ձ/կ-ում, **իոնական** ձ/կ-երում սկսվող թ.12-ն ու 22-ն ավարտվում են **ԷՓ** ձ/կ-երում: Աղյուսակից ինչպես նկատվում է թ.21-ը, սկսելով **Փ3**-ում՝ շարունակվում է +1 **Ի3**, -3 **Փլէ4/5**, +3**հիպոԻէ3** ձ/կ-երում, ավարտն ամփոփելով -3**ԷՓ4/5** ձ/կ-ում:

Այսպիսով՝ ժողովածուում ներկայացված Վայոց Ձորի ծիսական երգերն ու նվագներն իրենց բազմազանությամբ, գիտական ու գեղարվեստական արժանիքներով, առ այսօր անհայտ գտածոներով լրացնում են հայոց ավանդական երգ ու նվագի հարուստ անդաստանը, նպաստում մեզանում կարևորվող հայոց երաժշտական բարբառների ուսումնասիրությանը:

ԶԱՎԵՆ ԹԱԳԱԿՉԱՆ

ОБ ОСОБЕННОСТЯХ МУЗЫКАЛЬНОГО ЯЗЫКА ТРАДИЦИОННЫХ ОБРЯДОВЫХ ПЕСЕН И НАИГРЫШЕЙ ВАЙОЦ ДЗОРА

В настоящий XII выпуск серии «Армянская народная музыка» вошли представляющие большую научную и художественную ценность обрядовые песни и наигрыши Вайоц Дзора. Материалы, представленные в сборнике были записаны в процессе научной экспедиции Х. С. Кушнарева в 1928 г., а также пяти научных экспедиций сотрудников Отдела народной музыки в 1957, 1990, 1991, 1997 и 1998 гг.¹ Их материалы хранятся в фонотеке Института искусств НАН РА. Из всей совокупности вышеназванных записей для настоящего сборника были отобраны 144 образца.

Нашей задачей является анализ включенных в сборник образцов в аспекте их мелодических, структурных, типологических проявлений. Исследование проводилось с учетом жанровой и поджанровой классификации обрядовой музыки. Отобранный материал расположен в сборнике в следующей последовательности: 1) календарные праздники; 2) ритуалы вызывания дождя; 3) паломничество; 4) свадебный обряд; 5) погребальный обряд. В сборник включены как народные духовные, так и светские песни и наигрыши, исполняющиеся в процессе вышеназванных обрядов и ритуалов. Принимая во внимание существенные различия мелодического склада песен (36 примеров) и наигрышей (64 примера), относящихся к жанру свадебного обряда, мы сочли целесообразным представить их двумя соответствующими подразделами. В процессе исследования большим подспорьем стали труды Комитаса, Х. Кушнарева, К. Худабашян и Р. Пикичян, посвященные исследованию армянского традиционного музыкального искусства.

КАЛЕНДАРНЫЕ ПРАЗДНИЧНЫЕ ОБРЯДОВЫЕ ПЕСНИ

Праздник Рождества. Из совокупности разнообразных рождественских песен в сборник включены три образца народных песенок, которые исполняют группы детей, ходящих по домам. Все три образца имеют игровое содержание и структуру. Они принадлежат к числу тех обрядовых песен, в процессе которых попеременное пение сопровождается театрализованными сценками, связанными с обрядом. Как правило, они многочастны. Песенка №1 «Матушка, матушка скажите нам, как зовут вашего сыночка» изложена в *эолийском*² ладу с квинтовой основой, в размер 6/8. Преобладают хорические и ямбические стопы и их самые разнообразные хорейямбические структуры, благодаря чему песня приобретает сатирический оттенок и присущий плясовым произведениям особый жизнерадостный настрой. Рождественские песенки № 2 и № 3 по содержанию близки предшествующей. № 3 имеет четырехчастную форму. Части дополнены предваряющими и заключающими припевными строками «Аллилуйя...» Из словесных составных первая часть, которая отсутствует в предшествующих примерах, представляет таинство (символ) рождественских песенок. Во второй части повторяется наличествующая в предшествующих примерах вопросно-ответная структура. В III и IV

¹ В район Вайоц Дзор в 1957 г. научную экспедицию осуществил музыковед кандидат искусствоведения (в последствии доктор искусствоведения) Матевос Мурадян). В 1990 г. научной экспедицией руководила кандидат искусствоведения Каринэ Худабашян, участниками были Рипсима Пикичян (ныне кандидат исторических наук) и Лилит Ернджакян (ныне доктор искусствоведения), а в 1991, 1997 и 1998 гг. экспедицией руководила Рипсима Пикичян, участниками были Завен Тагакчян (ныне кандидат искусствоведения), Арусяк Петросян и Ева Диланян.

² Наименования квантитативных стоп обозначены в соответствии с классификационной «Таблицей наименований квантитативных стоп» (на трех языках – русском, армянском и арабском). См. **Худабашян К.**, Армянская музыка в аспекте сравнительного музыкознания, Ереван, 2011, с. 185.

частях воспеваётся младенец (Христос), к чему прибавляются слова предвкушения подарка-жертвоприношения. Образец изложен в эолийском ладозвукоряде с терцовой основой, стихометрика имеет восьмистопную структуру с равномерным делением 4:4.

Праздник Сретения Господня. И в наши дни в контексте обряда Праздника Сретения Господня сохранилась традиция противостоять зимним студенным дням, обогревая матушку землю костром-огнем, плясать вокруг костра, что зачастую сопровождается жизнерадостными плясовыми наигрышами в исполнении зурны-дхола, а также песнеплясками любовного или иного содержания. К сожалению, в отличие от поэтического текста, сохранилось мало записей вокальных образцов этой разновидности песнеплясок армянского традиционного песенного искусства. В представленной в сборнике песнепляске № 7 «Девушка, давай плясать с нами» словесный текст имеет свойственный импровизационным опусам свободный тип изложения. В соответствии со структурой слова и мелодии песня делится на пять частей (куплетов). Преобладающими являются свойственные плясовым метроритмам продолжительные сплетения составных частей, что способствует непрерывному течению круговых танцев. При таком условии вытекающие из наличных в словесной структуре неравномерностях, непериодичные структуры приобретают вторичное значение.

Праздник «Масленица». В нашем сборнике приведен только один образец Масленичной песни - № 8 «Придите, взгляните, кто съел нашего козла?» Словесный текст, как и распространенные в различных местах его варианты, имеет вопросно-ответную форму. Мелодия изложена в амбитусе большой сексты в эолийском звукоряде с квартовой основой и имеет трехчастную форму. Каждая из частей заключена в одном периоде, первые две из них трехстрочные, а последняя – пятистрочная. Как и в песне на Праздник Сретения Господня, здесь также преобладают хорейамбические стопы, которые составляют 70% всей песни, что свидетельствует о танцевальной структуре мелодии.

Праздник Вознесения. Собрание обрядовых песен, исполняемых на праздник Вознесения содержит восемь образцов песен-предсказаний «Джан Гюлум» и одно его инструментальное исполнение (№ 14). В изложении песенных (вокальных) образцов мы считаем наиболее значимыми строки «Джан, Гюлум, джан, джан». Помимо записанного в размере 4/4 № 7, все остальные изложены в размере 6/8. Стихотворные тексты песен состоят из двухстрочных или четырехстрочных куплетов, перемежающихся припевными строками, при этом основные строки имеют семистопную, а припевные – пятистопную, структуру. Невзирая на столь явное различие числа строк в основных и припевных строках, и те и другие имеют двухтактную равнодлительную временную протяженность, внутреннее деление которых в свою очередь **равномерно**. Даже в том случае, когда слоги количественно различны, не наблюдается нарушения равномерного танцевального течения мелодии. В песнях «Джан Гюлум» и № 14 инструментальном наигрыше, зафиксированном в Вайоц Дзоре преобладают эолийские звукоряды. В примерах № 6 и № 11 можно отметить ладовые **переходы** от *ионийского* с терцовой основой на малую терцию вниз в *эолийский* с кварто-квинтовой основой. Из девяти примеров только № 10 изложен в *гипоионийском* ладозвукоряде. Во всех семи примерах в начальных разделах в слогометрическом изложении строк преобладают ямб и хорей, а в заключающих – кадансовых оборотах стопы бакхий и спондей, которые наряду с периодичностью имеют также танцевальную **акцентировку**.

Праздник Преображения Господня. Несмотря на то, что некоторые ритуалы, связанные с этим обрядом, по сей день сохранились в нашем быту, однако обрядовые песни, песнепляски или пляски встречаются очень редко. Единственный пример № 17, записанный нами в Вайоц Дзоре – «Сона, любимая моя», является вариантом записанной Комитасом той же песни в Шираке³. Хотя в сравнении с записями Комитаса наш вариант изложен в том же *гипоионийском* безопорном ладозвукоряде

³ Комитас, Собрание сочинений, т. 13, № 172, Ереван, 2004.

де, и ничем не отличается от него ладовой структурой, в аспекте ритма в нашем варианте, в отличие от комитасовского, вместо равнодольных восьмых нашли место пунктирные хореймбные стропы, что придает мелодии особый маршеобразный колорит.

Տյառնընդառաջ: Եկեղեցական ավանդույթի համաձայն՝ քառասուն օրական Քրիստոսին տաճար տանելու և Միմն ծերունու կողմից Տիրոջն ընդառաջ գնալու հետ կապված այս տոնը մարզի բնակիչների շրջանում հիմնականում առնչվում է կրակի միջոցով մաքրագործվելու, չար ուժերին վանելու և նորապսակների պտղաբերությանն ուղղված պատկերացումների հետ: Ըստ այդմ, փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո գյուղի կենտրոնում խարույկ էին վառում և նորապսակ հարսներն ու փեսաները յոթ պտույտ պարում էին խարույկի շուրջը, որից հետո թռնում էին կրակի վրայից: Չարմանդուխտ Առաքելյանի (գ. Քարագուլխ) հավաստմամբ՝ ծիսական շուրջպարի գլուխը՝ պար-բաշի, սովորաբար տան մեծն էր լինում. սկեսուրը կամ՝ սկեսրարը: Խորհրդային շրջանում հարսին այդ օրը հաճախ սպիտակ զգեստ էին հագցնում, որը համեմատելի է ավանդական կյանքում տոնի օրը հարսանեկան տարազ հագնելու ավանդույթին: Հարսի և ամուլ կանանց ներքնազգեստի փեշը երեք տեղից վառում էին խարույկի մարմրող կրակից, որ չարը խափանվի և պտղաբեր լինեն: Ընդունված էր նաև այդ օրը հարսանիք կամ նշանդրեք անելն ու հարսի օժիտը տանելը: Մալիշկա գյուղում, ըստ Քնար Մովսիսյանի, Տրընդեզի կրակի շուրջը պարտադիր երեք անգամ զուռնայի նվագի տակ «գոյնդ էին քաշում», որի «գլուխը կանգնում» էին քավորը կամ սանամայրը: Ուշագրավ է, որ զուռնաչին, դամբաշն ու դիուլչին շրջանից դուրս էին կանգնում՝ դրսից պաշտպանելով պարաշրջանն (համայնք) ու խարույկը: Իսկ երբ մասնակիցները խնջույթի էին նստում՝ չամուսնացած աղջիկները ճկույթ-ճկույթի բռնելով կրակի շուրջը պարում էին՝ երգ ասելով «...սկզբից թռնես են, հետո իկյաս են, պարես են»: Կրակի շուրջը յոթ կամ երեք շրջան պարելու ավանդույթը մեկնաբանվում էր աշխարհի ստեղծման և սուրբ երրորդության պատկերացումների համատեքստում:

Բարեկենդան: Մեծ պասից առաջ երկու շաբաթ տևող այս տոնին բնորոշ առատ խնջույքներն ու դիմակավորված թատերախաղերը մարզում կենցաղավարել են մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը: Պտղաբերությանը միտված կենդանակերպ դիմակներով կամ կոսմոս-քառու-կոսմոս շրջելիությունները /կին-տղամարդ, բարի-չար, վերև-ներքև/ խորհրդանշող պարերը մինչև XX դ. երկրորդ կեսերը տարածված էին հարսանեկան ծիսակարգում: Գիտարշավի ընթացքում գրանցվել է Բարեկենդանի տոնի ծիսական երգերից միայն մեկ օրինակ՝ «Ելեք, տեսեք»-ը, որ երգում էին տղամարդիկ, իսկ կուտակողական կառուցվածքների և բարենաաղթանքների հատվածներում, ըստ գրառված դաշտային նյութերի, նրանց ձայնակցում էին նաև երեխաները:

Համբարձման տոն/ Չանգյուլում: Այս տոնը գերակայորեն ընկալվում է իբրև բնության զարթոնքին համադրված սիրո և երիտասարդների ապագայի՝ ճակատագրի գուշակության տոն: Դրա խոսուն վկայությունը բնակիչների շրջանում առավել ընդունված՝ Չանգյուլում կամ Վիճակի տոն անվանումներն են և տոնի կատարողակարգը: Ըստ ծագումով խոյեցի բանասաց Վերգինե Պողոսյանի՝ Հորբատեղ գյուղում աղջիկները նախորդ օրը յոթ աղբյուրից ջուր էին հավաքում, յոթ

աղբյուրի ակունքի քար, յոթ տեսակ ծաղիկ, յոթ ծառի տերև, լցնում էին կավե պուլիկի մեջ: Մի երիտասարդ աղջկա հարսի շորեր էին հագցնում, մի ուրիշ աղջկա՝ տղամարդու հագուստներ, բեղեր էին ամրացնում, գլխարկ դնում և միմյանց թևանցուկ այս գույզը, կավե պուլիկը ձեռքներին, շրջում էր տնետուն՝ վիճակ հավաքելու: Վիճակի պուլիկը զարդարում էին ծաղիկներով ու կուպեկներով (բանասաց՝ Արփենիկ Օհանյան, ծագումով վանեցի, գ. Խաչիկ) «աստղունքի» (աստղերի տակ) էին դնում, որ վիճակի տերերի ճակատագիրն աստղերն ու լուսինը որոշեն: Տոնի օրը պուլիկը պարացնելով գնում էին մի կանաչ տեղ, նստում և մեկ-մեկ հանելով վիճակ-առարկաները՝ դրանց տերերի ճակատագիրը գուշակող խաղիկներ էին երգում: Վիճակի խաղիկները երգում էին ձայնեղ աղջիկները, (Ես աղջիկ եմ՝ ալ կուզեմ, //Բարակ մեջքիս շալ կուզեմ, //Հենց որ անցնիմ ձեր տունը՝ //Ոսկին՝ սարեսար կուզեմ), իսկ կրկնակային տողերի ժամանակ (Ջան, գյուլում/ծաղիկ, ջան, ջան կամ՝ Ջան, վիճակ, ջան, ջան) միանում էին բոլորը՝ մենակատար-խումբ սկզբունքով: Ծեսն ավարտվում էր բնության գրկում կազմակերպված խնջույքով, որի բաղադրիչներից էր կաթնապուրը:

Վարդավառ: Ըստ քրիստոնեական ավանդույթի՝ տոնը կապվում է հարությունից հետո Հիսուս Քրիստոսի պայծառակերպության հետ: Ամառային այս տոնին բնորոշ էին ուխտագնացությունները, անհատների կամ համայնքի կողմից սրբավայրերին մատուցվող զոհաբերությունները/մատաղ, ցորենի հասկեր, մրգեր ու ծաղիկներ նվիրաբերելու, աղավնիներ թռցնելու, ջրերի ակունքների մոտ բացօթյա խնջույքներ կազմակերպելու և միմյանց վրա ջուր ցողելու արարողությունները⁴: Ժողովրդական ավանդույթում բնապաշտական արմատները պահպանած այս տոնը, բանասացների վկայությամբ, Վայոց Ձորի գյուղերում ուղեկցվում էր ուրախ երգ ու պարով, միմյանց ցորենի ու ծաղիկների խաչփնջեր նվիրելով, լարախաղացների ներկայացումներով, աշուղական մրցույթներով, ջրցանուկի ծիսական խաղերով, որ պահպանվել են նաև մեր օրերում: Վարդավառի տոնին սրբավայրերում 4-5 դաստա (խումբ) երաժիշտ էր լինում, որ հատուկ գալիս էին տարբեր բնակավայրերից (գումնա, դամ, թմբուկ կամ դուդուկ, դամ, դհոլ): Ըստ Ձինավեն Բազարյանի (գ. Գլաձոր)՝ տոնի կարևոր տարրը կավե շվիկն էր, որ պատրաստում էր գյուղի բոլորը: Այն փոքրիկ թեյնիկի նման կանթ և ծորան ուներ: Շվիկի կտրավուն իրանի վրա դեմ դիմաց անցքեր էին բացում, որ օդը դուրս գա: Երբ մեջը ջուր էին լցնում (100-150 գրամ) ու փչում՝ ուժեղ սուլոց էր լսվում և ջրի շիթը թափվում էր: Անգամ առանց ջրի փչելիս՝ զիլ ձայն էր արձակում և տոնի օրը դաշտերում ու ուխտավայրերում տարածվում էր երեխաների ցնծալի սուլոցը: Ջրցանուկի ծիսական խաղերի ժամանակ շվիկի անցքը մատով փակում էին, որ ջուրը չթափվի: Մինչև Առաջին աշխարհամարտը, Վարդավառի և Նավասարդի տոներին գյուղերում այդ շվիկով ու փոքրիկ կժերով իրար վրա ջուր էին ցողում ու ծաղիկներ նվիրում միմյանց: Տարեցները հավատում էին ջրի մաքրագործող հատկությանը: Ըստ որի՝ տոնի օրը շվիկից ցողված ջուրը գերբնական գործություն է ստանում և մարդիկ, կենդանիներն ու բույսերը պարտադիր պիտի հաղորդակցվեն ջրին՝ հակառակ դեպքում դժբախտություն էր կանխատեսվում: Ջուր ցողելիս աղոթքի նման խոսքեր էին ասում, որոնք բանասացը չի հիշում:

Անձրևաբերության ծես: Միջին և ավագ սերնդի բանասացները մանրամասնորեն նկարագրում էին Հայաստանի տարբեր բնակավայրերում տարածված «չորայինի ժամանակ» իրականացվող ծիսական արարողությունները, որ ընդհանուր առմամբ հայտնի են որպես *անձրևաբերության ծես*⁵: Օրինակ, Աղավնաձոր գյուղում (Օսան Հակոբյան) տարիքով կանայք փայտե խաչաձև հիմքի վրա կամ ավելից ծեսի խորհրդանիշ տիկնիկ՝ Չամչի խաթուն (անձրևի հարս) էին պատրաստում, զգեստավորում, ծաղիկներով զարդարում ու տալիս երեխաներին, որ տնետուն շրջեն ու երգելով մատաղի համար յուղ, կաթ և ձու հավաքեն.

*Չամչի խաթունն էկել ա,
Ձեր դռանը կանգնել ա,
Մե հավից չու ա ուզում,
Կարմիր կովից կաթ ա ուզում,*

⁴ Մանրամասն տե՛ս **Խառատյան-Առաքելյան Հ.**, Հայ ժողովրդական տոները, Երևան, «Հայաստան», հրատ., 2000, էջ 174-189:

⁵ Հայաստանի տարբեր բնակավայրերում տարածված անձրևաբերության ծեսերի մասին մանրամասն նկարագրություններ կան Ազգագրական հանդեսներում:

*Սև կովից եղ ա ուզում,
Վերևից /երկնքից անչրև ա ուզում,
Որ չեր ուզածը քա չեզի՝
Անչրև թափի վրը մեզի:
Ով, որ քա՝ լիանա,
Ով, որ չքա՝ չորանա...*

Գիտարշավների ընթացքում գրանցվել է ծիսահմայական այս երգի երեք երգային և երեք խոսքային տարբերակ: Հերիեր գյուղում տիկնիկին ևս Չամչի խաթուն կամ Կոտի-Կոտի էին անվանում, իսկ Աղավնաձորում՝ նաև Նուրի-Նուրի:

Բոլոր տներից Անձրևի ոգու (հարսի) բաժինը հավաքելուց հետո՝ երեխաները, Չամչի խաթունի ձեռքերից բռնած, տարեց կանանց առաջնորդությամբ, գնում էին ուխտավայր, իսկ նրանց հետևից տղաներն արորի վեսկին⁶ էին տանում. քսում հողին, հետո դնում էին հողի մեջ, որ անձրև գա: «Աստված, անձրև տուր ասելով» ծիսական երթի մասնակից կանայք պղնձե կաթասների կափարիչներն իրար էին զարկում, փայտե կամ մետաղե շերտիներով հարվածում էին դույլերին, որ ուժեղ զրնգան, ինչպես ամպերն են գոռում անձրևից առաջ, իսկ կողքից գնացող երեխաները նրանց և Չամչի խաթունի վրա վրա ջուր էին լցնում: Ծեսի ընթացքում հավաքված մթերքով հասարակաց մատաղ էին անում. թարմ լավաշ էին թխում, հալվա պատրաստում և բաժանում էին: Ուխտավայրի մատուռ ևս նախապես զարդարում էին ծաղիկներով: Ըստ ականատեսների՝ ծեսից հետո միշտ անձրև էր տեղում և բոլորն ուրախ շուրջպար կամ ձեռնապար էին բռնում՝ թրջվելով անձրևի տակ: Խաչիկ գյուղում, նկարագրված ծեսն անելուց բացի՝ կանայք հետևյալ հմայական խոսքերն էին ասում. «Կովերը՝ կթան, եզները՝ լծան, մի քթալ թան՝ առաջի շան...» (Արփենիկ Օհանյան): Հերիեր գյուղում ևս (Սրբուհի Բաղդասարյան, Չարո Հակոբյան), խաչածև ամրացված փայտերից կամ փայտե շերտիներից երկու կամ երեք Չամչի խաթուն (Կոտի-Կոտի) էին պատրաստում: Տիկնիկի երեսին սպիտակ կտոր էին փաթաթում, հարսի շոր հագցնում՝ կապույտ երբեմն՝ գույզգույն, գլխին ամպագույն կտոր կապում, որ երկնքին նման լինի, կարմիր գոգնոց կապում, վզից երկուսից մինչև հինգ թաշկինակ էին կապում, զարդարում ծաղիկներով, երկու աղջիկ ձեռքերից բռնում էին ու գյուղում շրջելով կանչում ու բաժին հավաքում. «Չամչա խաթունն էկեր ա, մեզի անձրև բերեր ա, մեզի լիություն բերեր ա» կամ՝

*Կոտի - կոտին էկել ա,
Ծեր դռանը չոքել ա,
Սև կովի կաթն ա ուզում,
Կարմիր հավի ծյուն ա ուզում,
Ասրանե անչրև ա ուզում:*

Գյուղացիները՝ ծեր ու ջահել, ջուր էին լցնում նրանց վրա, կարծես անձրև էր գալիս: Գեղին ծաղիկների (Վարթևորի ծաղիկ) փնջերով զարդարված չամուսնացած աղջիկները երգելով ու պարելով գնում էին տիկնիկի հետևից և մինչև հասնում էին գյուղի ծայրն, ըստ բանասացների՝ անձրև էր տեղում: Ծեսի ավարտին գնում էին եկեղեցի, մոմ վառում և իրենց երախտագիտությունն արտահայտում մատաղ կտրելով: Բացի այդ, չորս պառավ կին փայտե լուծ էին պատրաստում և կուզեկուզ լծվում, ինչպես գութանով վար անելիս: Մի կին էլ դառնում էր մաճկալ: Բոլոր կանայք տղամարդու հագուստ էին հագնում, փափախ դնում և մտնում բացած փոսի մեջ ու նմանակում գութանով վարի գործընթացը: Մաճկալ դարձած պառավը ասերգի ոճով կանչում էր՝

*Վար արա, ակոս արա,
Յամաք հացի կարոտր ենք՝
Ըուլիաթիս դու ողորմա,
Վար արա, ակոս արա, եզո ջան,
Վար արա, վար արա, վար արա,
Ըուլիաթիս դու ողորմա,
Վարի, ակոս արա, ցել արա,*

⁶ Ծեսի քննությունը տե՛ս **Թադևոսյան Ա.**, Գարբինը հայոց ծիսակարգում (Պատմագագադական հետազոտություն) //ՀԱԲ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 109-112, 117-125:

*Վարի, վարի, եզո ջան,
Ակոս արա, եզո ջան,
Բարի լուսու դռներն ա բաց,
եզո ջան,
Բարի լուսու դռներն ա բաց,
Յեղ արա, ակոս արա,
եզո ջան,
Հո, հո, հո, հո, եզո ջան, հո,
Ակոս արա, ցեղ արա,
Իմ գութան, վարի, վարի,
իմ գութան,
Ձեռս պակաս, ուժս հասած,
Հազար ու մի ցավի փեր,
Ինչ եմ նայում մերկ ու սոված՝
Մի փուն լիքը մանուկներ....*

Շուրջը հավաքված տարբեր տարիքի կանայք և աղջիկները ջուր էին ցանում նրանց վրա, իսկ գութանավարների դիմացից գնացող աղջիկները, ծիսական տիկնիկներին պատեցնելով, գնում էին ու կանչում «Աստված, Աստված, խնդրում ենք քեզանից, անձրև տուր, մենք քեզի բաժին կտանք, մատաղ կտանք, դու մեզի անձրև տուր»։ Այդ աղջիկների վրա էլ էին ջուր լցնում, ոտքից գլուխ թրջվում էին բոլորը։ Ծեսի ավարտին միշտ անձրև էր գալիս և ամբողջ համայնքը գյուղն էր պարում անձրևի տակ։ Դրան հաջորդող շաբաթ օրը սրբավայրում մատաղ էին անում՝ ի երախտագիտություն Բարձրյալի։ Շատերը նաև ալանի հաց էին թխում (մուրազ էր կոչվում) և յոթ տեղ բաժանում (*այրուր անել, դիւակ անել, ուխտ անել*) «Աստու սերին կամ սրբին այրտավորել, ուխտ անել»։ Իսկ Քարագլուխ գյուղում տարեց կանայք տնետուն էին ընկնում, ձու, շաբար, յուղ, այուր հավաքում, հավա պատրաստում և որպես մատաղ բաժանում համագյուղացիներին, շատերը նաև գառ էին մորթում, մոմ վառում սրբի դռանը (Չարմանդուխտ Առաքելյան)։ Չամչի խաթունը պատեցնելով գնում էին Թուխ մանուկ, *Ճյնավոր*։ Ուխտավորները տիկնիկի և երեխաների խմբի վրա ջուր էին լցնում։

Հերիեր գյուղում, մինչև XX դ. 60-ական թթ., տարածված էր նաև անձրևաբերության հմայական ծեսի մի այլ տարբերակ (Չարո Հակոբյան)։ Երաշտի ժամանակ պառավ կանայք նստում էին էշի վրա ու շրջում գյուղում։ Այդ ընթացքում երիտասարդ տղաներն ու հարսները ջուր էին լցնում, թրջում ավանակի գլուխն ու պառավին։ Հեծյալ պառավները շրջում էին տնետուն ու հերթով կանչում՝

*Սև կովի կաթն եմ ուզում,
Կարմիր հավի ծյուն եմ ուզում,
Ասրանե անչրե եմ ուզում...*

Տանտերերը նրանց ձայնակցում էին՝ կրկնելով տեքստը և նմիրաբերում նշված բարիքները։

Սակայն, ավելի տարածված էր Կոտի-Կոտի անձրևաբերության տիկնիկով ուղեկցվող ծեսը, քանի որ հավատում էին դրա գործությանը։

Գրանցված նյութերից կարելի է նկատել, որ անձրև բերելու ծիսահմայական տեքստն, անկախ արարողակարգից, հիմնականում նույն բովանդակությունն ու տրամաբանական կառույցն ունի։ Նույնն է նաև ջուր ցողելու (նմանողական մոգություն) և ակնկալվող արդյունքն ստանալիս՝ զոհաբերությանը երախտագիտություն արտահայտելու (ցորենի հասկեր, ծաղիկներ, միրգ, հաց, մոմ, կենդանի) ավանդույթը։

Նույն բանասացը պատմում է, որ մինչև 1960-ական թթ. գյուղի դիմացի սարի վրա, մատուռի մոտ, կաթնատու կրծքի նման մի խորհրդավոր քար կար, որի տեղը միայն մեկ երկու տարեց ու հարզված տղամարդ գիտեին՝ Ավագը և Սողոմոնը։ Երաշտի ժամանակ նրանք գնում էին սար, մոմ վառում սրբավայրում, ապա այդ քարը դնում մոտերքում գետնի տակից բխող աղբյուրի ակի շուրջ արված գուռի մեջ և հատուկ խոսքեր էին ասում։ Երբ անձրևը գալիս էր, ամբողջ գյուղը հավաքվում էր, ներքևում, անձրևի տակ պարում, ուրախանում և կանայք երգում էին՝ «Անձրևը շողաց, երկինքը դողաց, երկինքը դողաց, երկինք պատռվավ...», դրանից հետո հասարակաց խնջույք էին անում և տղամարդիկ քարը տեղն էին վերադարձնում։ Պատերազմի ժամանակ Սողոմոնն իրեն էր վստահել գաղտնիքը, որ գյուղը երաշտի չմատնվի և ինքը երկու անգամ կատարել է ծեսը։ Տարիքի բերումով,

այլևս սար չի բարձրանում, ցավով լսել է, որ քարը ինչ-որ մարդիկ տեղահան են արել ու կոտրել, բայց մատուռը մարզի բնակիչների սիրելի ուխտավայրերից է:

Մարզի բոլոր համայնքների ծխական կյանքում ուխտագնացությունները կարևոր դեր ունեն մաս այսօր: Գիտարշավների ընթացքում տարբեր դեպքեր ու գրույցներ են գրանցվել դրանց մասին: Այս ժողովածուում տեղ են գտել Սուրբ Սարգսին նվիրված երկու երգ, որոնք տարածված են մաս Հայաստանի տարբեր բնակավայրերում: Բանասացների հավաստմամբ՝ (Մովսիսյան Սարիբեկ, գ. Մալիշ - կա, Հարությունյան Ջիվան, գ. Գլաձոր) տաք եղանակներին շաբաթ և կիրակի օրերին, ժողովրդական տոներին և սրբերին նվիրված օրերին, մարզի տարբեր գյուղերից ուխտի էին գալիս Սուրբ Խաչ: 1970-ականների վերջերից, ավելի հաճախակի էին դարձել այդ սրբավայրում երեխաներին մկրտելու ծեսերը, որոնք ուղեկցվում էին զոհաբերություններով և ուրախ խնջույքներով, հասարակաց շուրջ-պարերով (Գյովնդ, Վերվերի, Քոչարի, Շալախո): Այդ օրերին մարզում հայտնի չորս-հինգ ձեռք երաժշտախմբերից ու եկեղեցականներից բացի՝ այլ բնակավայրերից ևս գալիս էին երաժիշտներ ու հոգևորականներ՝ քանի որ ուխտագնացները ևս տարբեր մարզերից էին գալիս սրբավայրին խոնարհվելու և երեխաներին մկրտելու: Մի շաբաթ օր շուրջ 50 երեխայի և երիտասարդի մկրտություն են արել և մոտ 70 գլուխ աքաղաղ ու գառ է զոհաբերվել սրբավայրում: Տարածքը վերածվել էր մի հսկայական տոնախմբության վայրի և ամենուր կարելի էր տեսնել ու լսել ժողովրդական ու աշուղական երգ, նվագ ու պար:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍ

Հայոց ավանդական հարսանիքի բոլոր առանցքային արարողությունները բնորոշվում են ծիսակարգի տրամաբանությամբ պայմանավորված երաժշտախոսքային հենքով: Հարսանիքի ողջ ընթացքում հնչող երաժշտությունը ծեսի օրգանական բաղկացուցիչն է: Ծեսի սկիզբն ու ավարտն ազդարարվում է «Սահարի» կոչվող գուռնայի ազատ հանկարծաբանական բնույթի նվագով: Այն նախաքրիստոնեական շրջանից մեզ հասած արևի պաշտամունքի հիմնն է, որ ավանդական կենսակերպում վերածվել է մեղեդային արքեսիայի:

Վայոց ձորի մարզում ևս, հարսանիքի հացն ու գաթան թխելու, մսացուի, թագվորագովքի, ծաղկոցի, նորապասկների նժույգերը զարդարելու արարողություններն ուղեկցվում էին երգ ու նվագով: Հարսին տանում էին սպիտակ ձիով, որի բաշը զարդարում էին խնձորներով ու նախշուն թելերի ծոպերով, վրան գորգ էին գցում և խաղացնելով ճանապարհ ընկնում, իսկ փեսային՝ շեկ նժույգով: Հարսի տնից դեպի եկեղեցի, ապա՝ փեսայի տան ամբողջ ճանապարհին և շենքից ներս գնացող բոլոր արարողությունները, մինչև նորապասկներին սեղանի շուրջ նստեցնելը, պարտադիր ուղեկցվում էին գուռնա-դիոլի չղաղարող հնչյուններով: Երաժշտության անընդհատությունը կապվում էր բաց տարածքում ձայնի միջոցով չար ուժերին վանելու հավատալիքի հետ: Այս ընթացքին բնորոշ էին մաս հարսնառի մասնակիցների ճամփի պարերը, երիտասարդների ձիախաղերը, ճանապարհ կտրելու, զոհ մատուցելու, նվիրատվություններ անելու, երթի մասնակիցներին հյուրասիրելու արարողությունները, որ երբեմն ուղեկցվում էին մաս ոգևորող բացականչություններով կամ հրացանագարկերով: Փեսայի տան շենքի մոտ ևս, երաժշտության զիլ հնչյունների ուղեկցությամբ պարտադիր կատարվող չարխափան և բարիք ու պտղաբերություն ակնկալող ծիսական արարողությունների մի ամբողջ շղթա էր իրականացվում՝ նորապասկներին դիմավորել, ուսերին լավաշ գցել, մեղրով հյուրասիրել, ցորեն, քաղցրավենիք ու մանրադրամ շաղ տալ և այլն: Այս շարքի թատերային-պարային արարողություններից՝ յուրահատուկ է փեսայի ծնողների ծխական ըմբշամարտի՝ կոխ բռնելու տեսարանը (որ պարտադիր պիտի ավարտվեր մոր հաղթանակով), սկեսուրի շերեփով պարը (տան իշխանության խորհրդանիշ մոր կողմից հարսին ընդունելը), որ գերդաստանի արական և իգական արմատներին ներկայացնելու և ընտանիք մուտք գործող նոր անդամին սիրով ընդունելու խորհուրդն ուներ: Շարքը (տե՛ս նոտային օրինակները) կարծեք ամբողջացնում է հարսին շենքից ներս հրավիրելու սկեսուրի երգը՝ «Արի, բալե ջան», որ մեր օրերում գրեթե մոռացվել է՝ փոխարինվելով խոսքային բարենաղթանքների:

Գիտարշավների ընթացքում ձայնագրված բազմաբնույթ երգերն ու նվագները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել ավանդական հարսանիքի տարբեր փուլերի մասին: Հատկապես ուշագրավ են սահարիները, այլուր մադելու, ընծաներ մատուցելու, նժույզներին խաղացնելու երգերն ու նվագները, նորաստեղծների և հարսանեկան նժույզի գովքերը, հարսի հրաժեշտի երգերը, հայրական տնից հեռանալիս երգվող լացերը, փեսայի մորն ուղղված կատակերգերը, ծիսական կոխի նվագները, համայնական շուրջպարերը՝ Հարսնապար, Խնկի ծառ, Քոչարի, Վերվերի, Ուռուֆանի, պարերգերը և այլն: Հարսանեկան խնջույքի սենյակում ավանդաբար հնչում էին ավելի փափուկ հնչողությամբ փողային՝ (դուդուկ և դամ), լարային (սազ, թառ, քամանչա), ու հարկանային (դափ կամ փոքր դոլ) նվագարաններից կազմված նվագախմբերը: Բացի հրավիրված ավանդական նվագաժամների դաստայից՝ կարող էին իրենց երաժշտական օժտվածությունն ու վարպետությունը ներկայացնել նաև բոլոր ցանկացողները: Հատկապես տարածված էին սիրային, քնարական, կատակային, խոհական-խրատական, հայրենասիրական թեմաներով ժողովրդական ու աշուղական երգերն ու նվագները, պարերգերը, աշուղական սիրավեպերից ծեսին համապատասխանող հատվածները:

Փեսայի տանը կազմակերպվող խնջույքը կարելի է պայմանականորեն բաժանել երեք մասի՝ կանոնացված, պարտադիր հերթականությամբ արարողությունների ու կենացների, ծիսական երգերի ու նվագների շարք, որն աստիճանաբար վերածվում է խրախճանքի, ապա կրկին կանոնավորվում հասարակաց պարով (Հարսնապար) և ավարտվում առագաստով՝ նոր կյանքի սկիզբ:

Ավանդական հարսանեկան ծեսում խնջույքի մթնոլորտի նկարագիրն ու երաժշտական վարքն ակնհայտորեն ադերսվում էր ժողովրդական տոների, հատկապես՝ Բարեկենդանին: Բանասացների հավաստմամբ, Վայոց Ձորի տարբեր գյուղերում կատակային բնույթով առավել աչքի էր ընկնում հարսանեկան խնջույքի 2-րդ օրը, երբ միջին տարիքի տղամարդիկ կենդանակերպ կերպափոխումներով բեմադրություններ էին ներկայացնում: Մինչև 1980-ական թթ. հարսանեկան խնջույքում կարելի էր տեսնել պտղաբերություն ակնկալող խորհրդանիշներով, կառնավալային տարաբնույթ դիմակավորում-հանդերձավորմամբ ուղեկցվող զվարճալի, կատակապարային մնջախաղերի: Օրինակ, երեսը սևացրած կամ սպիտակացրած, գլխին այծի պոզեր, մեջքին՝ փոստ, իսկ պարանոցին, գոտուն կամ ձեռքին զնգզնգացող կախիկներ ամրացրած այծամարդու սիրախաղ-պարը, որի ընթացքում վերջինս փորձում էր գրկել-համբուրել կանանց, իսկ տղամարդիկ նրան հրելով քշում էին, տապալում գետին, բայց այժմ, այնուամենայնիվ վերակենդանանում էր ու փախչում՝ հետը մի երիտասարդ աղջիկ տանելով (գ. Մալիշկա, Հորբատեղ):

Ամենատարածվածը փիղ, ուղտ, այծ խաղացնելն էր: Օրինակ, փիղ խաղացնելիս, երկու տղամարդ մեջք-մեջքի էին տալիս, վրաները ներքնակ գցում, մեջքին նստացնում էին 5-6 տարեկան մի երեխա, որի վրա նոխրագույն շոր էին գցում, շորից կնճիթ և պոչ էին սարքում ու խնջույքի թեժ պահին, երաժշտության ուղեկցությամբ հայտնվում հարսանքավորներին, փղավարի պարում, ծուծու կայում երիտասարդ կանանց, ընկնում ու բարձրանում, ապա հեռանում սենյակից՝ մասնակիցների ծիծաղին ու ռեպլիկներին արժանանալով (գ. Աղավնաձոր, Եղեգնաձոր ավան): Առանձնապես զվարճալի էր համարվում կնոջ դեր ստանձնած տղամարդը, որին տղանարդիկ ձեռք էին գցում, գրկախառնվում, համբուրելու փորձեր անում, իսկ վերջինս՝ կոտրատվելով պարում էր ու սիրահետումներից խուսափել ձևացնում (գ. Գլաձոր, Խաչիկ):

Խնջույքի ընթացքում երբեմն փեսայի հորաքույրը կամ մորաքույրը ևս կերպափոխված պարում էին դանդաղ ու հանդիսավոր երաժշտության տակ: Պարողի դեմքն այլուրով սպիտակացնում էին, վզին չորացված մրգերից շարոց էին գցում՝ տեղ-տեղ խնձորներ կախելով, գլխին փոքր ավելներից խաչաձև գլխանոց և գույնզգույն ծաղիկներով, լայն փեշերով զգեստ հագնում: Նրան շրջապատում էին հարսանքավորներն ու գյուվնդ բռնում: Ամենայն հավանականությամբ, այս թատերայնացված պարն ադերսվում էր բերքի հովանավոր ոգիների պաշտամունքին: Գլաձոր գյուղում, փեսայի տան խնջույքի ընթացքում երբեմն սկեսուրի փեշի ծայրին ավել էին կապում, դեմքն այլուրով սպիտակացնում, ձեռքին մի մեծ, փայտե շերեփ տալիս և պարացնում ծանր գյուվնդի նվագի տակ: Հավաքվածները ծափ էին տալիս, ոգևորող բացականչություններ անում, զովաբանում: Սկեսուրի

նման կերպափոխությունն, ըստ ամենայնի, առնչվում էր օջախի հովանավոր ոգիների մասին հնագույն պատկերացումներին: Մարտիրոս գյուղում, ըստ Ջինավեն Ղազարյանի, մինչև վերջերս էլ հարսանիքում կարելի էր տեսնել տարբեր դիմակավոր կերպարների, որոնք բոլորին զվարճացնում էին և ոգևորում: Օրինակ, տղամարդկանցից մեկին կնոջ զգեստ էին հագցնում, կրծքին ու փորին փոքրիկ բարձեր դնում, գլխին թաշկինակ կապում, դեմքը սպիտակացնում էին, ձեռքին ճիպոտ տալիս, որ պարելիս իրեն ձեռք գցող կանանց ու տղամարդկանց խփի և ուրախ, երաժշտության տակ պարում էր ու կատակներ անում: Նույն գյուղում տարածված դիմակավորումներից էր խոյի պոզերով, վզին կախած զանգակներով ու մրգերի շարոցներով, արևածաղկի չորացած ցողունին հեծած, բաթաթի մասը նժույգի գլուխ դարձրած, կանաչ ու կարմիր թելերից ոլորված սանձն ու ճիպոտը ձեռքին խաղացնելով խնջույքի տարածք մտած հեծյալը: Նա ուրախ մեղեդու հնչյունների ներքո դես ու դեն էր թռչկոտում, իր շուրջը պարող կանանց պոզահարում, տղամարդկանց՝ ճիպոտահարում ու պար գալիս, մինչև տղամարդիկ նրան հրում, զցում էին գետին, իսկ երեխաները վզից պոկում էին մրգերն ու զանգակները: Ապա՝ բարկանում էր, պոզահարելով բոլորին՝ պարային շարժումներով հեռանում: Յավոք, արդեն հազվադեպ կարելի է հանդիպել նման կերպափոխությունների, որոնցից համեմատաբար պահպանվել են այժի, խոյի և կնոջ կերպարներով պարերը: Թեև, ըստ բանասացների, այսօրինակ պարեր խնջույքի մասնակիցներին ուրախացնելուն էին միտված և կատակային բնույթ ունեին, այսուհանդերձ, նկարագրված կենդանապարերն ու բեմականացումները մեռնող-հառնող բնության ու պտղաբերության պաշտամունքի ընդգծված խորհրդանիշներ ունեն և աղերսվում են հնագույն հավատալիքներին, որոնք մեր օրերում մոռացվել են:

XX դ. կեսերից աստիճանաբար ծիսակարգից դուրս են մղվել նաև հարսանեկան երթի ձիախաղերը, ճամփի պարերը, թագվորագովքի արարողությունները՝ համապատասխան երաժշտախոսքային կառույցների հետ միասին: Հարսին հագցնելիս Ծաղկոց երգերին փոխարինում են ավանդականի վերափոխված տարբերակներից՝ «Ասենք շնորհավորի» երգային կատարումը (կամ՝ մենակատար-խումբ սկզբունքով միայն առողջանական խոսքով ասվող՝ *շնորհավորը*), ինչպես և աշուղական և ժողովրդական սիրային-քնարական երգերը՝ «Պարտեզում վարդ էր բացվել», «Բաղեն թռած բլբուլ ես», «Լուսին ես, ամպի տակից», «Հանդի լալա է յարս», «Ծաղկանց միջին ծաղկած գարդ ես»: Եթե ավանդական մշակույթում հարսի հրաժեշտի լացը՝ «Բեր, ձեռքդ համբուրեմ», «Տասնութ տարի ինձ պահել ես», «Վույ, աման, աղջ ջան, տանում են» հարսի անունից երգում էին ազգական կանայք ու աղջիկները, ապա մեր ժամանակներում դրանք հաճախ փոխարինվում են հրավիրված երաժիշտների նվագով «Կալոսի պոկեն» կամ երգերի նվագարանային կատարումներով՝ «Տանում են, աղջ ջան» և այլն:

ԹԱՂՄԱՆ ԾԵՍ

Մահերգեր: Ազատ-հանկարծաբանական մտածողության ինքնատիպ դրսևորումներով աչքի են ընկնում հատկապես լալիքները և ողբ-գովքերը: Դրանց ֆոլկլորային տարբերակները գերակշռում են գյուղական միջավայրում, իսկ ժողովրդապրոֆեսիոնալ ձևն առավել տարածված է քաղաքային կենցաղում: Ժողովրդական կենցաղում հնչող ողբ-գովքերն ու լալիքները հանգուցյալին ձոնված երաժշտական, բանահյուսական ստեղծագործություններ են, որ այսօր էլ, բազմաթիվ տարբերակներով, կատարվում են ննջեցյալի տանը, բակում (հուղարկավորման ծեսին նախորդող օրերին ու թաղումից առաջ) և գերեզմանոցում (հուղարկավորելուց առաջ և հետո), ինչպես նաև Իքնահողի, Յոթի, Զառասուների, Տարվա արարողակարգերի, բոլոր Մեռելոցների ու Սբ. Խաչի տոնի ընթացքում: Երաժշտության մեջ այս ժանրը հաճախ կոչվել է «ողբերգ», որը Ռ.Աթայանի հավաստմամբ. «...շատ ժողովուրդների ժողովրդական երգի տեսակ է՝ կապված հուղարկավորության, հարսանիքի, ինչպես նաև ծեսից դուրս՝ կենցաղային այլ հանգամանքներում լացի արարողության հետ, հիմնված ավանդական խոսքային և մեղեդիական բանաձևերի հանպատրաստից տարբերակման վրա»: «Թե ինչպես են եղել այդ (լալաց) երգերը,- գրում է Մ. Աբեղյանը, - մենք այդ չգիտենք: Դրանցից ոչ մեկը չի հասել մեզ: Գր. Նարեկացու վկայությամբ՝ այդ երգերը հորինվելիս են եղել հայրենի չափով: Դրանք անպայման փոքր երգեր են եղել, կես

քնարական ու կես վիպական, նման մեր ժամանակի լացի երգերին, ինչպես են XIX դարի լացի անտունիները, որոնք նույն հայրենի չափով են և գալիս են մեծ մասամբ հին ժամանակներից: Երկուտող տներում կամ բեյթերով հորինվածքն այնքան հատուկ է եղել այդ կարգի երգերին, որ «բայաթի» (արաբերեն բեյթ՝ տուն) բառը ստացել է նաև «մեռելի ողբի երգ» նշանակությունը, մինչդեռ այդ բառով անվանվում են առհասարակ երկուտող տներից-բեյթերից կազմված երգերը, ինչպես են մեր արդի ժողովրդական քառյակները»⁷: Մեր օրերում ևս, ողբ-գովքը հաճախ անվանվում է *բայաթի*, իսկ ողբասացը՝ *բայաթի կանչող*, *բայաթի ասող*: Բայաթի են կոչվում նաև դուդուկով, կլարնետով, երբեմն նաև՝ գուռնայով կատարվող մահերգերն ու տխուր մեղեդիները⁸: Տարբեր ժամանակներում և ազգագրական գոտիներում ողբերին տրվող անվանումները և մասնագիտական եզրերը փաստում են այս ժանրի բազմաշերտության մասին. *ողբ, մահերգ, սգերգ, եղերերգ, գովերգ, ողբ-գովք, լալիք, լացի երգ, չենով լաց, կոծի երգ, մեռելի երգ, բայաթի*: Դրանք բոլորն էլ կապվում են տխրության, մահվան ու բաժանման գաղափարների հետ: Մեր օրերում, այս երգերը կատարվում են հանգուցյալի հարազատների, հրավիրված ժողովրդական ողբասացների և ժողովրդապրոֆեսիոնալ երգիչների կողմից: Գրանցված դաշտային նյութի քննությունը ցույց է տալիս, որ ժողովրդապրոֆեսիոնալ երգիչների կատարումները գերազանցապես աչքի են ընկնում կանոնավոր կառույցով. դրանք ժողովրդական ու աշուղական երգեր են, կամ այդ ծիրում ինքնուս հորինվածքներ («Հեյ, վախ, հեյ, վախ, սիրտս», «Ախ, իմ մեր ջան», «Էս ինչ էղավ ինձ հետ», «Մեջդ ունեիր հազար ու մի վանք»): Նման երգերին բնորոշ է կրկներգի, կրկնակային տողի ու վերջնամասի ազատ հանկարծաբանական հենքը, որ գուգորդվում է տվյալ երգի որոշարկված կաղապարին: Մինչդեռ հանգուցյալի հարազատների, մերձավորների լալիքներն ու ողբ-գովքերն ազատ ասերգային բնույթի հանպատրաստից հորինվածքներ են, թեպետ հանդիպում են նաև մեղեդային հագեցվածությամբ նմուշներ («Սպանդերքն ես մտել», «Թագավորի նման ապրող հայրիկս», «Նանայիդ վիզը ծռավ», «Վայ, Ոսկի ջան», «Այ բալա ջան», «Բալաս, բալաս»): Ասերգային բնույթը պայմանավորվում է ողբ ասացողի կողմից խոսքին տրվող առաջնային նշանակությամբ, ասելիքի առատությամբ ու ձայնային-կատարողական տվյալներով: Այսպիսիք սովորաբար կատարվում են որպես երաժշտականացված մենախոսություն, որը երբեմն ուղեկցվում է սգակիրների արձագանք-ձայնարկություններով, ընդհատվում լացով (հմմտ. մենակատար և խումբ կատարման կերպի հետ): Ողբ ասացողը (հնում՝ *եղերանայր, լալիկան մեր, մայր ողբույն, գովք ասող, մեռել ծաղկացնող*), որ սովորաբար հանգուցյալի արյունակիցը կամ հարազատն է լինում, սկսում է ներկայացնել իրենցից հեռացողին՝ թվարկելով նրա արժանիքները (իրական և նրան վերագրվող), բնութագրում է իբրև անհատ, ընտանիքի անդամ, մեկնաբանում կյանքի անցած ճանապարհը՝ հասնելով մինչև մահվան պատճառն ու հարազատների համար նրա կորստյանը հետևող իրավիճակը: Ինչպես նկատելի է օրինակներից, ողբասացները գովաբանում են հանգուցյալի բնավորությունն ու մարդկային արժանիքները, բարեմասնությունները, նշում տարիքը, հմտությունները՝ *փեշակ ունենալը*, ներկայացնում կատարված փաստից արտածվող վիճակն ու հետևանքները, արտահայտում են իրենց ցավն ու բողոքը, ինչպես նաև հանգուցյալին զոհաբերվելու, նրա փոխարեն ցավն իրենց վրա կրելու պատրաստականություն հայտնում. *սևանար մորդ երեսը, մարտաքեզ* և այլն: Ողբ-գովքերում առաջնայինը խոսքն է, որի նկատմամբ մեղեդին հիմնականում իբրև հնչյունային ուղեկից է ծառայում (ֆոն): Հաճախ, երբ խոսքային հենքն առավելապես կազմված է լինում ձայնարկություններից, խոսքն ու երաժշտությունը միահյուսվում են՝ դառնալով ամբողջություն: Ինչպես հանկարծաբանական այլ կառույցներում՝ ողբ-գովքերում ևս, ասացողը հաճախ օգտվում է ժողովրդական ու աշուղական հայտնի մեղեդիներից ու երգերից: Երբեմն էլ, դրանցից ինքնաբերաբար ազդվելով՝ ստեղծում է իր երաժշտական դարձվածը կամ երգը: Գրանցված լալիքներում ու ողբ-գովքերում կարելի է տեսնել երկխոսության սկզբունքով կառուցված օրինակների, երբ մի տունը ողբասացի, մյուսը՝ հանգուցյալի կողմից է երգվում («Բալա ջան, ինչն՞ ձենդ կղրվեց»):

⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975 էջ 403-405:

⁸ Ժողովրդախոսակցական լեզվում հաճախ «բայաթի» բառն իմաստային առումով լայնանում է՝ որոշակի ժանրից վերաճելով ընդհանրապես նվագարանային երկարաշունչ և մեղամաղձոտ մեղեդիները բնութագրող եզրի:

Ողբ-գովքերի նպատակը հանգուցյալի գովքն է, փառաբանումը, նրան մատուցվող հարգանքը, հարազատներին մխիթարելը, մահացածի մասին հուշեր արթնացնելը, ներկաների մեջ ցավ ու ափսոսանք առաջացնելն ու ողբալը: Ողբ գովքերն ավելի սրտաճմլիկ են դառնում, երբ մահացողն «անմուրազ գնացած» երիտասարդ է: Ի տարբերություն արդեն «կյանք տեսած» ու «տարիքն առած» ննջեցյալների, որոնց համար ասված ողբի նպատակն է մխիթարել հարազատներին և հանգուցյալի անցած կյանքը ներկայացնելով նրա գովքն անելը: Երիտասարդ և «կյանք չտեսած» հանգուցյալին ձոնված գովքի նպատակը կատարված դժբախտությունը ողբալն է, անողոք ճակատագրի դեմ ուղղված բողոքն արտահայտելը և ներկաներին «մղկտացնելը»: Ողբ-գովքերը հաճախ ավարտվում են «մեռնողի խոսքով կամ պատգամով» (օրինակ՝ «Գերեզմանիս քարի վրա», «Թոքախտավոր, հիվանդ պառկած») և նրան տրվող խոստումներով: Վերջիններս առնչվում են նրա ընտանիքի անդամների նկատմամբ խնամքի ու հոգածության հավաստիացումներին: Այսպիսի դեպքերում ասացողը հանդես է գալիս մերթ առաջին, մերթ՝ երկրորդ դեմքով, անձնավորելով իրեն (երբեմն՝ նաև մյուս հարազատներին) և ննջեցյալին: Ժամանակակից ողբ-գովքերում (հատկապես տարեց ասացողների) դեռևս նկատելի են երկու աշխարհների, հոգու, ննջեցյալների պաշտամունքի հետ կապված ավանդական պատկերացումները, որոնք երևակվում են արդեն իբրև մթագնած և նախնական իմաստը կորցրած մշակութային շերտեր: Եթե հանգուցյալի հարազատների կողմից ասվող հանպատրաստից ստեղծվող գովքերն ավելի ինքնաբուխ ու զգայական են՝ խարսխված ցավի, վշտի ու հիշողությունների վրա, ապա հատուկ հրավիրված ողբասացները դրանք մատուցում են արդեն պատրաստի կաղապարներով, որոնք ընթացքում հանպատրաստից վերամշակվում են: Այս պարագայում ստեղծագործողը հաշվի է առնում մահացողի սեռը, տարիքը, ընտանեկան ու սոցիալական դրությունը, մահվան պատճառները, ներկաների երաժշտապոետիկ հակումները և դրանցով ամբողջացնում ողբի կառույցը: Այսօր էլ պատահում են ողբասաց ժողովրդական արհեստավարժ ասացողներ, որոնց հրավիրելու սովորույթը գրեթե վերացել է: Սովորաբար, տեղեկանալով համազրուղացու մահվան մասին, նրանք գնում են սգատուն, ողբալու հանգուցյալին և գովք ասելու՝ առանց վարձատրության ակնկալիքի (Աշոտ Գրիգորյան, գ.Շատին, Շուշան Գասպարյան, գ. Գլաձոր, Արփենիկ Օհանյան, գ.Խաչիկ, Չարո Հակոբյան, գ. Հերիեր): Եթե XIX դ. ողբ ասելու իրավունք ունեին միայն տարեց կանայք, որոշ բացառություններով նաև միջին տարիք ունեցողները, ապա այսօր տարիքային այդպիսի խիստ սահմանափակումներ չկան (թեև տարեց ողբասացներն ակնհայտորեն գերակշռում են): Մեր օրերում ողբ-գովքերը առանձնակի սրտաճմլիկ ու բազմազան են թաղման ծեսի ժամանակ (ավելի ստույգ՝ հուղարկավորման օրվա կատարումները), իսկ մնացյալ՝ հիշատակման ու ոգեկոչման ծեսերում կատարվողները, զգացմունքների արտահայտման և երաժշտապոետիկ առումով ավելի զուսպ են, սակավաթիվ և ոչ այնքան տարածված: Այս առիթներով այլևս չի պարտադրվում ողբ-գովք ասելը: Շատ դեպքերում դրան փոխարինում է ձայնարկություններով ու հանգուցյալին ուղղված տարբեր դիմելաձևերով լացը:

Հռիփսիմե Պիկիչյան

MUSIC IN FESTIVE AND CEREMONIAL LIFE OF VAYOTS DZOR

During Vayots Dzor expeditions, along with audio-taped songs and melodies, narrators' memories and comments about traditional festivals and ceremonies were recorded. Based on the recorded field and freedom-fighting materials, the general view of festive-ceremonial life of the region has been outlined, with its inseparable components, i.e. music-verbal folklore, songs and melodies.

In Azatek, Aghavnadzor, Areni, Artabuynq, Gladzor, Eghegis, Kechut, Herher, Horbategh, Malishka, Martiros, Movses, Chatin, Khachik, Qaraglukh villages, Vayots Dzor region, as well as in the town of Yeghegnadzor, materials of narrators of different ages have been recorded to get the most complete vision of the living practice, modern alterations and innovations in the music life beginning from the end of the 19th century to the end of the 90s of the 20th century. The multilayer character of the region was formed as a result of intertwining musical traditions of Vayotz Dzor natives, 19th-20th century repatriate Persian-Armenians and Van natives.

The materials in the present volume of the Armenian traditional music collection were recorded during the expeditions by Q.S. Koushnaryan, in 1928 (records are kept in the audio repository of Institute of Arts, National Academy of Sciences) and by the specialists of the Folklore Music Department in 1957, 1990, 1991, 1997, 1998. Field materials were recorded by research associates of the Institute of Arts MatevosMuradyan, KarineKhudabashyan, ZavenTagakchyan, HripsimePikichian, ArusyakPetrosyan and Eva Dilanyan. The notation of the recordings were made by ZavenTagakchyan, AshotMuradyan, Diana Danielyan, MargaritSargsyan, Eva Dilanyan, Marianna Tigranyan and AniHakobyan; the presentation of lyrics, folklore and national materials was made by HripsimePikichian.

A probe into the recorded materials let us assume, that soviet atheist ideology greatly influenced christian credo of the traditional festivals and ceremonies, and the rituals actually based on that credo. Hence, so called national christian and pantheistic traditions can be traced in the festivity timetable, fertility, wedding and burial rituals.

In accordance with the idea of the toasts, proposed during the feasting, and musical preferences, national andashugh (bard) music was performed, along with traditional songs and melodies that were characteristic to the festival and the ritual. From 1960s, musical pieces of different nations, composers and city folklore gradually came to play. Musical styles, tastes and play list, to some extent, were influenced by the television and radio concert performances, as well as, by the audio and video records brought from abroad later in 1980s. Especially remarkable are children's ritual music folklore pieces, most of which have been forgotten, lost or redefined their meaning due to the changes of living. Some of these exist as survivals or are redefined. Others underwent modifications because of the lifestyle alterations, resulting in children's games or recitative texts. Both direct and metaphorical meanings of the songs, i.e. the continuity of life and the idea of eternity, didn't change on the transition from pre-christian to christian cultures. According to traditional thought, these songs and recitatives were meant to take the goal to the supreme powers of the universe, make it agreeable to the God and get his protection through a child, that was the symbol of innocence. Hence, it could be assumed, that during the national festivals and rituals children played a well-defined part, which was arrayed in transitional states (cosmos, life) in music-verbal and game spells, magical sound imitations, prays and wishes. Some of the various examples are the ceremonial processions of children, who visited all the families of the community heralding and wishing good luck accompanied with candles, pumpkin lamps, torches, sounds of bells and cymbals during the New Year and Christmas celebrations. Some other examples («Nuri-Nurinekel a», «Vitchakn eke, inch kuze», «Govem-govem, um govem», «Jan Gyulum», etc.) can be seen during AndzrevaberutianTzes (Rainbringing ritual), Hambardzman ton (Ascension) and Vardavar festivals, when the children travelled from home to home, and performed songs of good wish and

nursery rhymes in response to treat demands, like rice, wheat, flour, oil, egg and sweets for protecting nature forces.

Children's recitatives, performed with monotonous sound of noise-making instruments and clay whistles to imitate birds trills and bee-buzzing during Tzaghkazard festival, were meant to symbolize the cosmogonic allegory of eternity of life. Similarly, other children's songs like «Nor, nor, noravor», «Arev, arev, durseli», «Arev, arev, ek, ek» (Sun, sun come out) or «Andzrev, andzrev, mi ari» (Rain, rain don't you come), transformed into games or ordinary rhymes nowadays, used to be ancient spell texts once, that contributed to re-establishment of the universal order. The children's ritual musical folklore texts have stable formulaic, as well as, changing, i.e. improvising parts. The formulaic part of the structure consists of a brief presentation of the main goal of the festival or the ritual, i.e. sacrifice for the supernatural forces and the resulting expectation- demand from them; empowering the family to share the traditional atmosphere and sensation of the ritual with the community members. Usually, the presentation is concluded with blessings to those, who make sacrifice- offerings and criticism for those who don't. Often, they are made-up of question-answer forms, which are characteristic music-folklore component of formulaic texts of spell cosmogonic ceremonies. This was another symbolic way of communication for children and adult groups during the traditional rituals, e.g. «Govem, govem, um govem?», «Nuri-nuri», etc. .

The variation part of the recitative, is generally used to name the family members, to describe or to add details to the main storyline in the growing piece. Its characteristic feature is the principle of continuity of the idea, formed on a seemingly unfinished plot, which is a completely new opportunity to improvise for a child every time. Continuously repeated texts of the songs are some kind of symbolic imitations of infinity and illusion of eternity. These pieces are performed both solo or by a group, either through reciprocal question-and-answer manner as in AndzrevaberutianTzes (Rainbringing ritual) songs «Purmatikinnek e», «Nuri-Nurin», «Kodikodin» and others. They are characterized by the simplicity of melody and lyrics, a lot of repetitions, clear and periodic rhythms and appear in the rhythm-modulation sphere of traditional musical culture. These examples show, that all the members of the community prepared for the festivals and took part in the rituals, thus erasing the differences between the performers and the spectators. All the music-verbal texts, ceremonial behavior and rules of conduct children learned from their grandmother, mother or sometimes elder children.

ANNUAL FESTIVALS

NOR TARI (New Year) - This is one of the most popular festivals. It is celebrated with abundant tables, singing and dancing, exchanging of presents, jokes and predictions. In the village of Gladzor, like H. Tadevosyan states, almost until 1970s, after the midnight clock bells, zurna players (Zurnachi) played loudly announcing the New Year's arrival. Then they went from home to home entertaining their fellow villagers. According to S. Hakobyan from Yeghegis village, relatives gathered in the house of the senior of the extended family and enjoyed the celebration of the New Year together, wished good luck and health to each other; the families of the newly-wed exchanged gifts. This custom is still in tradition nowadays. No other special ceremonial songs and tunes were recorded during the expeditions but «Sahariner», which with harsh sounds would repel the evil and would announce the beginning and the end of the ceremonies both during the New Year's Eve and Weddings.

SurbTznund/ Jrorhneq(Christmas and The Blessing of waters). Folklorist Edik and VergineHakobyans (village of Aghavnadzor) state that in soviet years Christmas (January 6) was known more as Jrorhneq, which originated from the symbol of Baptizm of the Lord. The first heralds of the festival were the groups of children that visited their fellow villagers. At midnight they were going from place to place carrying candles, fixed in pear-shape hollow pumpkin lamps, and hung special knitted adorned socks from erdik (open skylights) of flat roofs singing songs of blessings: «Aleluia, tzleluya, dzertghayianunnincha?» («Alleluia, it will grow, what is the name of your boy?») And the family members would answer from the inside and say the name of the kid, they the children would go on: «For the sake of your son, give us some raisin, dried

fruit and nuts». During pre-soviet years, the ceremonial text related to the name of SurbSargis (Saint Sargis). Community people made money offerings for ritual sacrifice or renovation of the sanctuary to get his protection. When the ladies of the house put raisin, dried fruit, sweets and aghandz (roasted grain) in the sock, the children sang: “ Aleluia, tzleluya, toghdzershemymishtshenmna, SurbSargisypahapandarna” («Alleluia, it will grow, Let your home be always blessed (literally-your threshold vital) let SurbSargis become a protector...»), then they went to another house. After visiting all the houses, children gathered together and enjoyed their presents. This above mentioned panarmenian ceremonial order proved vital till 60s of the 20th century in almost all the villages.

Tyarnendaraj (literally-Going forward to the Lord): The ecclesiastical account related to story of the old man Simeon who went forward to meet the Lord on the 40th day from his birth when taken to the temple, in national view is associated with purification through fire, repellency of the evil forces and fertility of the newly-wed. According to that, on February 13, after the evening liturgy a huge fire was lit in the center of the village and the newly-wed danced 3 or 7 circles around the fire and then they jumped over the fire. The senior of the family, the mother-in-law or the father-in-law, led the ritual roundelay; in Malishka village, it was either the qavor or the godmother. It's remarkable that zurnachi (zurna player), damqash (accompanist duduk player) and dholchi (dhol player) stood out of the circle thus protecting the community and the fire. When the participants began the feast unmarried girls danced around the fire holding each others, inch and sing. Three or seven roundelays were interpreted as the symbolic connotations of the world creation and the Holy Trinity. In soviet period, the bride was often dressed into a white gown that day which could be compared to the tradition of wearing wedding taraz (national dress) in traditional life. The skirts of the bride's and infertile women's underwear were burnt in three places to repel the evil and make them fertile. It was in tradition to do a wedding or an engagement that day, also to give the dowry of the bride.

Barekendan: Abundant feasts and masquerades characteristic to this festival were celebrated in the region until the beginning of the world war I. Dances with animal imitating masks or those symbolizing the cosmos-chaos-cosmos inversion (woman/man, good/evil, high/low) were widely performed in wedding rituals till the second half of the 20th century. Only one of the Barekendan ceremonial songs was recorded during the expedition «Eleq, eleq» (Get up ,get up). It was sung by men, and in the growing construction and blessings part, according to the field records, they were accompanied by children.

Hambardzum (The Day of Ascension)/ Jangyulum: This festival is mainly viewed as the celebration of the awakening of nature, love and fate predictions for the young people. Even the names of the festival, Jangyulum, Vitchaki ton (predicting festival) and the ceremonial order prove that fact. For example, in Horbatex village the day before the festival the girls collected water from seven springs, seven spring stones, seven types of flowers, leaves from seven trees and put into pulik (clay pot). A girl was dressed in a bride's dress, another one in a man's clothes, attached a moustache, put a hat on. Then this couple, arm-in-arm, went from home to home caring a clay pot to gather vitchak (fate prediction subjects). They adorned the vitchakpulik with flowers and coins (A. Ohanyan, Khachik village) and put it under the stars to allow the stars and the moon decided the fate of vitchak owners. On the festival day, they went to the field dancing with the pulik, sat down and took the subjects one by one, singing predicting songs on a soloist-group principle. The ritual closed with an outdoor feast, the important component of which was katnapur (milk soup).

Vardavar: According to christian tradition the festival is related to Jesus Christ's transfiguration after ascension. Pilgrimages, sacrifices to sanctuaries made by individuals or the community, wheat, fruits and flower offerings, flying pigeons, feasting near springs and watering each other were characteristic to this summer festival. In national tradition, according to narrators, in VayotsDzor villages this festival, that had maintained pantheistical origins, was celebrated with cheerful singing and dancing, exchanging of wheat and flower cross-bunches, equilibrists' performances, ashugh contests, ritual sprinkle games that are still vital nowadays. A small teapot like clay whistles, to sprinkle water, was an attribute of the festival.

Andzrevaberutiantzes (rainbringing ritual): Narrators of the elder generation described in detail the rituals of the Andzrevaberutiantzes performed in dry weather. For example, in Aghavnadzor village, elderly women made ritual symbolic doll called Chamchikhatun (rain bride). They put it on a cross-shaped wood-

en base or a broom, adorned with flowers, dressed, tied a light blue kerchief and gave it to children to go from home to home singing and collecting oil, milk and eggs for matagh (sacrifice). «ChamchiKhatunnekel a/ Dzerdranykangnel a/ Sevhavicedzu a uzum/ Karmirkovickat a uzum/ sevkovicyegh a uzum/ Yerknqicandzrev a uzum/ Vordzeruzacy ta dzezi/ Andzrevtapivirmezi/ Ovvor ta liana/ Ovvorchtachorana» (Chamchixatun has come and stood at your door, She wants an egg from the black hen, She wants milk from red cow, She wants butter from black cow, She wants rain from the sky, To give you what you want, To make the rain come down to us, Let the one who gives be blessed, Let the one who doesn't dry). After visiting all the houses children, led by the elderly women, went to the sanctuary holding ChamchiKhatun's hands. Women of this ritual procession hammered the caps of the copper kettles, hit the buckets with wooden or metallic spoons to imitate the sounds of thunder, and the children sprinkled them and the doll with water. With the gathered food they made matagh, baked fresh lavash, prepared halva and shared with everybody. The sanctuary and temple were also decorated with flowers. According to witnesses, after the ceremonies it always rained and everybody cheerfully danced roundelays and were wet with rain. During the expeditions three song and three verbal variations of this ritual-spell song were recorded. In Herher village the doll was called both Chamchikhatun and Koti-koti, and in Aghavnadzor they also called it Nuri-nuri. Another variant of Andzrevaberutian spell-ritual was practiced in Herher village until 60s of the 20th century. During a drought old women sat on donkeys and toured in the village. And the young men and women wetted the donkey's head and sprinkled water on the old lady. These old ladies rode from home to home and sang the above-mentioned song. The hosts sang with them and gave all the goods needed for the ritual. According to recorded materials, the content of the spell-ritual was the same regardless of the ceremonial order. Water sparkling (magic imitation) and the tradition of expression of blessing for an anticipated result (wheat, flowers, fruits, bread,candle, animal) were also the same. Pilgrimages play an important role in the ritual life of the community nowadays too. Different talks and cases were recorded during the expeditions describing them. According to narrators, ritual of children's baptism became more traditional from 1970s during national festivals. When the weather was fine on weekends people performed the ritual of baptism, accompanied with sacrifices, cheerful feasts and roundelays. Two songs, dedicated to SurbSargis and popular in different regions of Armenia, as well as annotations of ritual dances are involved in this digest.

The Wedding Ceremony

All the principal rituals of the traditional Armenian wedding are characterized by its main component, the music, stemmed from the logic of the ceremonial order. So called “Sahari” zurna improvising melodies are included in this digest. They are the hymn to the worship of the sun that have come down to us from pre-christian times and have transformed into a melodic archetype. The rituals of baking the wedding bread and gata, butchering the beef (yezmorteq), dressing up the bride and groom, adorning their horses were accompanied with songs and music. The bride's horse was white, and groom's horse was of fair colour. They decorated the hair of the groom's horse with apples and colourful threads, covered the horse back with a carpet and went dancing for their ritual ride. The procession from the bride's house to church and along the way to the groom's house, as well as all the rituals after passing the threshold till seating the bride and the groom at the table were accompanied with unceasing sounds of zurna-dhol. The incessancy of music related to the belief of repelling the evil in open-air spaces. Dances of the participants of harsnar (taking the bride from father's house to the groom's house) procession, young men's horse-games, rituals of sacrifices and offering makings, treating the participants of the procession were all characteristic to this ceremony. A whole series of rituals related to evil repelling, as well as promising well-being and fertility was performed-meeting the newly-wed, putting lavash on their shoulders, treating with honey, wheat and sweets, pouring coins, etc. . Amongst this theatrical-dancing rituals very special were the ritual wrestling “kokh” of the groom's parents, that surely had to be concluded with the mother's victory and the mother-in-law's dance with a ladle (welcoming the bride by the symbol of the power in the family, i.e. the mother). These were ways of introducing the male and female roots of the extended family and welcoming with love the new member of the family. Mother-in-law's song “Ari bale jan”(come in dear child) seems to complete this series. However, nowadays it is almost forgotten and changed to verbal blessings. Various recorded songs and melodies give us

